

## Կարօ Փայլանն Եւ Մարգար Եսայեան Կերընտրուած Թուրքիոյ Խորհրդարանի Երեսփոխաններ

Թուրքիոյ խորհրդարանական ընտրութիւններու նախնական արդիւնքներով 2 հայ պատգամաւորներ վերընտրուած են:

Նոր մէջլիսին մէջ պիտի ըլլան քրտամէտ ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան կողմէն Տիարպէքիրէն առաջադրուած հայագրի կարօ Փայլանը եւ իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան կողմէ Պոլսոյ 2-րդ ընտրատեղամասէն առաջադրուած Մարգար Եսայեանը:

Իր պատգամաւորական գործունէութեան ժամանակ կարօ Փայլանը մշտապէս բարձրաձայնած է հայ համայնքը յուզող հարցեր: Ան աչքի ինկած է Թուրքիոյ մէջլիսիններս իր համարձակ ելուցներով, որոնց մէջ բազմիցս բարձրաձայնած է Հայոց ցեղասպանութեան մասին՝ կոչ ընելով իշխանութիւններուն առեքնութիւն սեփական պատմութեանն ու ընդունիլ սեփական յանցանքը:

Պատգամաւորը նոյնիսկ համապատասխան առաջարկներ կացուցած էր, որու մէջ կը նախա-

Շար.ը էջ 4

## Պաքուի Մէջ Կայացած Շքերթին Ալիւ Դարձեալ Ռազմաշունչ Յայտարարութիւններ Ըրած Է

Պաքուի մէջ տեղի ունեցած ռազմական շքերթի ժամանակ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիւեւն ըսած է, թէ Ատրպէյճանը կողմ է դարաբաղեան խնդրի խաղաղ կարգաւորման, միաժամանակ սպառնալով՝ Հայաստանը պէտք է հասկնայ, որ ատրպէյճանական բանակն «ի գորտէ է ոչնչացնել ռազմական եւ ռազմավարական որեւէ դիրք»:

Ելուցիչ ունենալով Ատրպէյճանի զինուած ուժերու ստեղծման 100-ամեակին նուիրուած զինուորական շքերթին, Ալիւեւը կրկնած է այն ամէնը, ինչ տարիներ շարունակ ըսած է Ղարաբաղի մասին. «Լեռնային Ղարաբաղը ատրպէյճանական տարածք է, Պաքուն երբեք չընդունիր Ղարաբաղի գրաւումը, Ատրպէյճանը պիտի վերականգնէ իր վերահսկողութիւնը Ղարաբաղի եւ յարակից գրաւեալ տարածքներուն մէջ» եւ այլն: Ան յայտարարած է նաեւ, թէ Պաքուն պիտի շարունակէ գէնք գնել՝ բանակը ուժեղացնելու համար:

Ալիւեւի խօսքով, աշխարհի մէջ հիմա կը գերիշխէ ոչ թէ


Շար.ը էջ 5

## «Կաշառակերութեան Դէմ Պայքարի Ընթացքին Պէտք Է Խստորէն Հետեւիլ Օրինականութեան Ու Մարդու Իրաւունքներու Պաշտպանութեան».

«Մենք երբ Հայաստանում բացել ենք կոռուպցիայի դէմ պայքարի էջը, միեւնոյն ժամանակ փակել ենք քաղաքական ճանապարհների եւ քաղաքական հալածեալների, հնարաւոր քաղաքական հալածանքների էջը», - կաշառակերութեան դէմ պայքարի ընթացքի վերաբերեալ խորհրդակցութեան ընթացքին յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Ան նշած է, որ կաշառակերութեան դէմ պայքարի ընթացքին պէտք է խստորէն հետեւիլ օրինականութեանն ու մարդու իրաւունքներու պաշտպանութեան:

«Այսօր Հայաստանում կոռուպցիայի դէմ պայքարն ամենաշատը քննարկուող թեման է, եւ այդ ուղղութեամբ լուրջ աքթիւնութիւն կայ իրաւապահ մարմինների ու կառավարութեան կողմից: Դա բնական է, որովհետեւ կոռուպցիայի դէմ պայքարը յայտարարել ենք կառավարութեան կարեւոր առաջնահերթութիւններից մէկը: Այս գործընթացի համաթեքսթում պէտք է շատ խստորէն հետեւել օրինականութեանը, մարդու իրաւունքների պաշտպանութեանը, մարդու իրաւունքները յարգելուն, որպէսզի իրաւապահ մարմինների գործողութիւնների հետ կապուած որեւէ այլ մեկնաբանութիւն չլինի: Մենք երբ Հայաստանում բացել ենք կոռուպցիայի դէմ պայքարի էջը, միեւնոյն ժամանակ փակել ենք քաղ-



Վարչապետ Նիկոլ Փաշինեանի խորհրդակցութիւնը ուժային կառոյցներու ներկայացուցիչներուն հետ

բանտարկեալների եւ քաղաքական հալածեալների, հնարաւոր քաղաքական հալածանքների էջը: Շատ կարեւոր է, որ իրաւապահ մարմինների գործողութիւնները որեւէ կերպ այլ մեկնաբանութիւն ստանալու իրական հիմք չունենան: Շատ կարեւոր էմ համարում, որ մենք այս ֆորմաթով գանք ընդհանուր յայտարարի եւ առաջինը՝ համոզուած լինենք, որ կոռուպցիայի դէմ պայքարի գործընթացը շարունակուելու է, երկրորդը՝ գործընթացը շարունակուելու է առաւել արդիւնաւէտ եւ այս գործընթացի ընթացքում երաշ-

խաւորուելու են մարդու իրաւունքները, օրինականութիւնն ու ընդհանրապէս հանրութեան շահերը», - ըսած է Նիկոլ Փաշինեանը:

Նշենք, որ խորհրդակցութեան մասնակցած են իրաւապահ մարմիններու ղեկավարները:

Ներկաները վարչապետին զեկուցած են կաշառակերութեան դէմ պայքարի ուղղութեամբ իրականացուող եւ յառաջիկային նախատեսուող աշխատանքները: Անդրադարձ կատարուած է իրաւապահ մարմիններու փոխգործակցութեան արդիւնաւէտութեան բարձրացման վերաբերող հարցերուն:

## Շքեղ Տօնախմբութեամբ Նշուեցաւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան 100-Ամեակը

Անցեալ Կիրակի, Յունիսի 24ին, 2018, Հարաւային Գալիֆորնիոյ հայ գաղութը շքեղ հանդիսութեամբ մը, նշեց Հայաստանի առաջին հանրապետութեան հիմնադրութեան 100-ամեակը, Փաստինայի «Մէքսոն» հանդիսասրահին մէջ:

Սոյն յիշարժան ձեռնարկին ներկայ էին հոգեւոր առաջնորդներ, քաղաքական եւ հասարակական կազմակերպութիւններու ղեկավարներ, Հայաստանի հիւպատոսութեան ներկայացուցիչ Արմիւլա Շաքարեան եւ տարբեր շրջանների ժամանած իրաւունքամ հասարակութիւն մը:

Սկստուներու կողմէ կատարուած դրօշակի տպաւորիչ արարողութեանէն ետք տեղի ունեցաւ ԱՄՆ-ի եւ Հայաստանի հիմնդրներու կատարումը Համագայի յիշուցի «Սայթ Նովա» երգչախումբի կողմէ: Այնուհետեւ ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուծութեամբ յարգեցին Սարգսրապատի եւ այլ շրջաններու հերոսամարտի նահատակներու յիշատակը:

100-ամեակի կազմակերպիչ համահայկական միացեալ մարմնի անու-



Տեսարան մը 100-ամեակի հանդիսութենէն

նով իր բացման խօսքին մէջ Անուշ Գագուան ջերմօրէն ողջունեց ներկայ բազմութիւնը, ինչպէս նաեւ հրաւիրեալները, միասնաբար նշելու հայ ժողովուրդի այս նոր հանգրուանի անկախութեան հիմնադրութեան պատմական տարեդարձը:

Գերշ. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, հոգեւոր առաջնորդներու անունով (Յովնան Արք., Միքայէլ Եպս., եւ Վեր. Պերճ Ճամպագեան) ոգեկոչեց յիշատակը հա-

Շար.ը էջ 5



# ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Ի՞նչ է Պատրաստում Ատրպեյճանը

### ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Հայաստանում տեղի է ունեցել նոր կառավարման համակարգի եւ նոր Սահմանադրութեան պայմաններում Անվտանգութեան խորհրդի առաջին նիստը, որի ընթացքում պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանը գեկուցել է ակտիւ պաշտպանութեան կազմակերպման աւելի արդիւնաւէտ ձեւերի եւ մեթոդների ներդրման մասին, ինչպէս նշուած է հաղորդագրութիւնում:

Անվտանգութեան խորհուրդը նոր Սահմանադրութեան եւ կառավարման նոր մոտելի պայմաններում օժտուել է որոշումներ կայացնելու մանդատով, որոնք պաշտպանական բնագաւառի մասով ենթակայ են պարտադիր կատարման: Խորհուրդին է մշակելու պաշտպանական քաղաքականութիւնը:

Անվտանգութեան խորհրդի առաջին նիստը տեղի է ունենում ուշագրաւ ժամանակահատուածում: Յունիսի 26-ին, այսինքն վաղը, Ատրպեյճանը նշելու է իր զինուժի 100-ամեակը, որի աւելի քան 40-հազարանոց զորահանդէսին Պաքուն ծրագրում է ներկայանալ իր ռազմական ամբողջ հզօրութեամբ: Դրանից առաջ յայտարարուել են մի քանի նշանակալի ձեռքբերումների մասին՝ թեւաւոր հրթիռներ Թուրքիայից, հեռահար հրթիռներ Իսրայէլից եւ Պոլոնեզ համագործակցին հրթիռներ Պեյրուսից, որը Հայաստանի իբրեւ դաշնակիցն է ՀԱՊԿ-ում:

Միաժամանակ, Պաքուն արդէն մօտ երկու ամիս է աշխոյժ շարժեր եւ ինժեներատեխնիկական աշխատանքներ է կատարում առաջնագծում, եղել են նաեւ Նախիջևանի ուղղութեամբ յայտնի քայլերը:

Այդ ամէնը տուել է անխուսափելի պատերազմի մասին խուսակցութիւնների նոր ալիքի աւելի: Իրականում պատերազմի անխուսափելիութիւնը կախուած է մի հանգամանքից՝ Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ հաւասարակշռութեան խախտում, որը Պաքուի մօտ կ'առաջացնի ռազմական պատկերացնելի յաջողութեան համոզուածութիւն:

Հաւասարակշռութիւնն անկասկած բաղկացած է մի քանի գործօններից, այդ թւում ոչ միայն ռազմատեխնիկական: Ռազմատեխնիկական հաւասարակշռութիւնը քաղաքական հաւասարակշռութիւնը: Պաքուն լայնամասշտաբ որեւէ քայլի համար պէտք է ունենայ հաւանութիւն այդ դաշտում: Հայաստանն էլ պէտք է չէզոքացնի դրա հնարաւորութիւնը: Այդ տեսանկիւնից կարելու է մի կողմից Ռուսաստանի հետ յարաբերութիւնը, միւս կողմից Իսրայէլ նաեւ յարաբերութիւնը Արեւմուտքի հետ: Կարելու է նաեւ Իրանի գործօնը:

Ատպեյճանն այդ ուղղութիւններով առաջ մ շուրջ հաւանութեան կամ յաջողութեան հեռանկար, եւ Հայաստանին առաջ մ յաջողութիւն է այդ մասով պահել հաւասարակշռութիւնը: Միաժամանակ, ակնառու է, որ ներքին կեանքում ծաւալուած կոռուպցիայի դէմ լայն թափով պայքարը իր խորքում ունի նաեւ ռազմատեխնիկական հաւասարակշռութիւնն ապահովելու նպատակ, քանի որ դրա համար կարելու է իւրաքանչիւր լուծման, էլ չսասած, երբ խօսքը պիւտոնի վերադարձուող միլիարդաւոր դրամներ

մասին է: Հայաստանի յաւելեալ կարելու ռեսուրս է թաւալել յեղափոխութեան արդիւնքում ձեւաւորուած բացառիկ լեզիտիմ իշխանութիւնն ու համընդհանուր դրական սպասումն ու տրամադրուածութիւնը:

Միաժամանակ ակնառու է, որ Ատրպեյճանը փորձում է նոր թափ հաղորդել այսպէս ասած սառը պատերազմին: Դա չի նշանակում, որ տաք պատերազմի վտանգ չկայ: Առաւել եւս այն չպէտք է թերագնահատել երբեք, անկախ Ատրպեյճանի որեւէ քայլից:

Սակայն Ատրպեյճանի գործողութիւնները պէտք է դիտարկել նաեւ այլ տեսանկիւնից: Պաքուն փորձում է աւելացնել արագութիւնը, Հայաստանը հետ թողնելու համար: Այրիլի քառօրեայ պատերազմում Պաքուն խոշոր հաջողով ապարդիւն միջոց իր տարիների ձեռք բերած ռազմա-քաղաքական առաւելութիւնը, ընդհուպ ռազմական շանտաժի անկարողութեան աստիճան: Վիեննայի օրակարգից ամիսներ անց, 2017 թուականի Փետրուարի 25-ի դիւերսիոն ներթափանցման փորձի ժամանակ Ատրպեյճանը ստացաւ աննախադէպ ուժգին հակահարուած:

Այլեւի համար ակնառու էր, որ խաղն աւարտուում է, եւ թերեւս վերջին յոյսը Սերժ Սարգսեանի վարչապետութիւնն է, որը Հայաստանում կարող էր բերել հանրային քաղաքական միջնորդի նոր անկման, կամ մէկ այլ դէպքում այդ վարչապետութեան դէմ բողոքի հանդէպ ուժի կիրառման եւ Հայաստանի միջազգային խոցելիութեան:

Սակայն, մի կողմից թաւալել յեղափոխութեան յաջողութիւնը, միւս կողմից Այրիլի 23-ին Սերժ Սարգսեանի կայացրած որոշումը խաղն էլ աւելի շրջեց Այլեւի դէմ՝ Հայաստանի միջազգային աճող

վարկանիշով ու բացառիկ լեզիտիմ իշխանութեամբ:

Այս պարագայում Այլեւը ինքն ունէր ոչ թէ առաջ անցնելու, այլ Հայաստանից հետ չմնալու խնդիր: Ներկայումս նա ակնյայտօրէն փորձում է լուծել երկուսը միանգամից՝ հասնել եւ արագօրէն անցնել Հայաստանից՝ ռազմա-քաղաքական փաթեթի մասով: Հաղորդել նաեւ սառը մրցավազքի այնպիսի տեմպ, որի հետեւից չհասցնի Հայաստանը:

Ատրպեյճանն անկասկած ունի դրա նիւթական եւ ֆինանսական հնարաւորութիւնը: Այդ տեսանկիւնից մարտահրաւէրն իսկապէս բաւական լուրջ է եւ Հայաստանն ունի հաւասարակշռութեան ռազմա-քաղաքական փաթեթը պահելու խնդիր:

Չուտ ռեսուրսային կարողութեան իմաստով Հայաստանը ներկայում ունի այդ հարցը լուծելու առաւել մեծ ներուժ, թէ նիւթական ռեսուրսների մոբիլիզացիայի, թէ նաեւ հանրային տրամադրուածութեան մասով՝ որպէս ոչ պակաս կարելու ռեսուրս:

Տուեալ դէպքում սակայն խնդիրը ոչ միայն ռեսուրսների ծաւալային մասն է, այլ դրանց օգտագործման էֆեկտիւութիւնը ռիսկերի եւ մարտահրաւէրների համարժէք ու ամբողջական գնահատման, այսինքն Ատրպեյճանի քայլերը գնահատելու եւ առաջադրուող ու առաջադրուելիք խնդիրներին արձագանքելու առումով, որպէսզի ռեսուրսները ծախսուեն առաւելագոյն էֆեկտիւութեամբ:

Այլապէս չգողանալը, գողութեան Անապարհը փակելը դեռ ամբողջական հարցի լուծում չէ: Կարելու էր գոյն խնդիր է, որին սակայն պէտք է յաջորդի այն, թէ որքանով է ճիշտ գնահատուել վտանգն ու ըստ այդմ որքանով է ճիշտ «տեղաբաշտել» դրան դիմակայող ռեսուրսը:

«ԼՐԱԳԻՐ»

## Նոր Աղմկոտ Բացայայտումներ

### ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱԱԾ-ն բերման է ենթարկել Պետական պահպանութեան ծառայութեան պետի նախկին տեղակալ Վաչագան Դազարեանին:

Օրերս ՀՔԾ-ն հաղորդել էր, որ յարուցուել է քրէական գործ՝ ապօրինի հարստանալու, յայտարարագրերում կեղծ տուեալներ ներկայացնելու կամ յայտարարագրման ենթակայ տուեալը թաքցնելու դէպքի առթիւ:

Յիշեցնենք, որ «Սելենա» ՍՊԸ-ի փաստացի սեփականատէր Ռ. Բեգլարեանի բնակութեան վայրում յայտնաբերուել է առանձնապէս խոշոր չափերի գումար՝ 35.000.000 ՀՀ դրամ, 1.110.400 ԱՄՆ տոլար, 230.500 եւրօ, իսկ աւտոտնակից՝ 2.000 ԱՄՆ տոլար, «Ֆրանկ Միւլլեր» ապրանքանիշի 2 հատ ժամացոյց, «Ռենջ Ռովեր» եւ «Մերսեսես Պենո» մակնիշի 1-ական աւտոմեքենաներ:

Նախաքննութեամբ պարզուել է, որ Ռ. Բեգլարեանի ամուսինը՝ Վաչիկ Դազարեանը, ըստ բարձրաստիճան պաշտօնատար անձանց էթիկայի չանձնաժողովի պաշտօնական կայքի, 2008 թուականի Յունիսի 19-ից մինչեւ 2018 թ. Մայիսի 17-ը հանդիսացել է բարձրաստիճան պաշտօնատար անձ:

Վաչիկ Դազարեանը առաջին մարդն է, ում դէմ Հայաստանում քրէական գործ է յարուցուում ապօրինի հարստացման հիմքով:

Սակայն այս գործն ուշագրաւ

է ամենեւին էլ ոչ միայն այս պատճառով. գեներալ Վաչիկ Դազարեանը կամ Սերժի Վաչոն՝ ինչպէս աւելի շատ յայտնի է այս անձնաւորութիւնը, Սերժ Սարգսեանի գործունէութեան ողջ ընթացքում եղել է նրա թիկնազօրի պետը, այսպէս ասած՝ «աջ թեւը»:

Այս հանգամանքը խօսուել է մի քանի տեսանկիւնից: Գաղտնիք չէ, որ գեներալ Դազարեանը Սերժ Սարգսեանի անունից, յաճախ նրա յանձնարարութեամբ կարգաւորել է մի շարք գործեր, ակտիւ ներգրաւուած է եղել նախկին նախագահի յատկապէս ստուերային գործունէութեան հատուածում: Հիմա պարզուում է, որ գործ ենք ունեցել անյուշալիօրէն կոռուպցիոնալ պաշտօնակցի հետ, որը չի յարգել ոչ իր ուսադիրները, ոչ էլ՝ պետական ծառայութիւնը:

Վաչիկ Դազարեանը Սերժ Սարգսեանի, նրա շրջապատի, իշխանութեան հաւաքական դէմքն է: Մեղադրուող գեներալի շէֆը, նրա իշխանութիւնը հարստացել են նոյն ապօրինի մեթոդներով՝ համատարած կոռուպցիայի եւ թալանի հետեւանքով:

Նախօրէին պարզուեց, որ նախկին նախագահի եղբոր՝ Լեւոն Սարգսեանի հետ կապակցուած ընկերութիւնները պետութեանը հասցրել են 300 միլիոն դրամից աւելի գումար, ըստ հաւաստի լուրերի՝ օղակը սեղմուում է Սերժ Սարգսեանի միւս եղբոր՝ Սաշիկ Սարգսեանի շուրջ:

Ոստիկանութիւնը բերման է

ենթարկել Սաշիկ Սարգսեանին: Այս մասին յայտնել է ՀՀ ոստիկանութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի վարչութեան պետ Աշոտ Ահարոնեանը: «Այլ քսանդր Սարգսեանը բերման է ենթարկուել ապօրինի գէնք կրելու կասկածանքով, Երեւանի Սայաթ Նովա փողոցից», - ասել է Ահարոնեանը:

Այս բոլոր իրադարձութիւնները գալիս են ամրապնդելու այն կարծիքը, որ Սերժ Սարգսեանի բոլոր մերձակորները թախաբուած են եղել կոռուպցիայի մէջ: Գործ ունենք դասական գողապետութեան հետ:

Այս համատեքստում ակնյայտ է, որ Նիկոլ Փաշինեանը չի կարող չզրուած որոշակի երաշխիքներ տալ Սերժ Սարգսեանին. Հայաստանում տեղի ունեցածը շարքային իշխանափոխութիւն չէ, իսկ յեղափոխութիւնը չի կարող կոմպրոմիսի գնալ կոռուպցիայի, գողապետութեան հետ:

Միւս կողմից՝ տեղի ունեցող աղմկոտ բացայայտումները տալիս են Ռոբերտ Քոչարեանի, Սերժ Սարգսեանի իշխանութիւնների քաղաքական, բարոյական, իրաւական էպիկրիզը:

Գործ ունենք պետութեան դէմ կազմակերպուած տոտալ յանցագործութեան հետ, երբ Հոկտեմբերի 27-ի, Մարտի 1-ի ոճրագործութիւններ միջոցով ամրապնդուել է կոռուպցիոն հրէշաւոր համակարգ՝ լափելով պետութեան հիմքերը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱՎԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԵԱՏԱՊԱՐԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**



ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեւանի Աւագանիի Նիստը՝ Առանց Քաղաքապետի



Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարեան եւ իր դղեակները

Երեւանի ավագանիի երրորդ նստաշրջանի վերջին նիստը տեղի ունեցած է քաղաքապետի բացակայութեամբ:

Նիստը վարող առաջին փոխքաղաքապետ Կամո Արէջեանը տեղեկացուցած է, որ Երեւանի քաղաքապետ պարոն Մարգարեանը կը բացակայի առողջական խնդիրներու պատճառով:

Ոչ այնքան քաղաքապետի բացակայութենէն, որքան անոր լուծութենէն զարմացած «ԵԼՔ» խմբակցութեան ղեկավար Դաւիթ Խաժակեանը նախորդ օրերու իրադարձութիւններուն մասին խօսած է: Անոր խօսքով՝ երբ աքթիւսթները կը պահանջեն քաղաքապետի հրաժարականը, մամուլը կը գրէ այդ մասին, իսկ օրերս ներկայացուած հետաքննութեան մէջ ամբողջ կեանքը միայն պետական պաշտօններ զբաղեցուցած 40-ամեայ Տարոն Մարգարեանին կը վերագրուին դղեակներ ու միլիոններու հասնող հարստութիւն, հարցեր կ'առաջանան, որոնք պարզաբանման կարիք ունինք - «Ինչո՞ւ քաղաքապետը առ այսօր այդ հարցերին չի պատասխանում, եղե՞լ է արդեօք հրաժարական, չի՞ եղել... Ի՞նչ է նա պատրաստուած անել: Ես որեւէ հարցում շտապողականութիւն չեմ ցանկանում ցուցաբերել,

բայց գոնէ հասկանալ, թէ ինչ է կատարուած եւ որ ժամկետում մենք ինչպիսի արդիւնք կ'ունենանք: Ես կարծում եմ, Երեւանի քաղաքացիները արժանի են իմանալու, թէ այս ավագանին դեռ որքան պէտք է գործի»:

«Երկիր Ծիրանի» կուսակցութիւնը, սակայն, պահանջած է, որ Տարոն Մարգարեանը պէտք է հրաժարական տայ, աւագանին՝ հրուշակեմ Մարգարեանը կարգաւորուած են օրէնքով», - «Երկիր Ծիրանի»ի երեք կանանց հակադարձած է Արէջեանը: Զարուհի Փոսթանճեանը յիշած է Մարգարեանի ղեկավարած «Երեւան» հիմնադրամի քրէական գործն ու չարաշահումներու իրական մեղաւոր յայտարարած է Մարգարեանը:

Յիշեցնենք, ԱԱԾ-ն «Երեւան» հիմնադրամի մօտ իրականացուցած խուզարկութիւններու արդիւնքով պաշտօնական լիազօրութիւններու չարաշահման եւ պաշտօնական դիրքն օգտագործելով խարդախութիւն կատարելու յօդուածներու յատկանիշներով քրէական գործ յարուցած էր ու մեղադրանք առաջադրած էր հիմնադրամի տնօրէն Աշոտ Ղազարեանին եւ Դաւիթաշէնի թաղապետի տեղակալ Խաչատուր Կարապետեանին հանդէպ:

Կարէն Կարապետեանը Լքած է ՀՀԿ-ի Նախագահի Առաջին Տեղակալի Պաշտօնը

Հայաստանի նախկին վարչապետ Կարէն Կարապետեանը պիտի լքէ Հանրապետական կուսակցութեան նախագահի առաջին տեղակալի պաշտօնը: Այդ մասին երէկ լրագրողներու հետ ճեպագրոյցի ժամանակ ըսած է Հանրապետականի խօսնակ Էտուարտ Շարմազանովը:

Շարմազանովը նշած է, որ նորմալ կը գնահատէ Կարապետեանի այս քայլը:

«Գնահատում եմ շատ նորմալ: Կարէն Կարապետեանն ինքը հասուն քաղաքական գործիչ է, ինքն է որոշում՝ լինե՞լ առաջին տեղակալ, թէ՞ չլինել: Ես յարգանքով եմ վերաբերում Կարէն Կարապետեանի այդ որոշմանը», - ըսած է ՀՀԿ խօսնակը:

Իսկ թէ ո՞վ կը փոխարինէ Կարապետեանին այդ պաշտօնին, Շարմազանովը դժուարացած է ըսել: «ՀՀԿ խորհրդի նիստ կը լինի, խորհրդի նիստն է լիազօր, իրաւաստ ընտրել կուսակցութեան նախագահի տեղակալներին եւ առաջին տեղակալին: Որեւէ արտաուճ բան չեմ տեսնում», - ըսած է ան:



Հայաստանի Գախկին վարչապետ Կարէն Կարապետեան

Հարցին, թէ սա փախու՞ւտ է Հանրապետական կուսակցութենէն, ՀՀԿ խօսնակը պատասխանած է. - «Փախուտ չի, ո՞վ է ասում, հիմա մարդն էդքան աքթիւ չի, մարդը, որպէս առաջին տեղակալ, գտնում է, որ ինքն այս քաղաքական փրոսեսներում շատ աքթիւ ներգրաւուած չի, եւ գտնում է, որ արդար չի, որ ինքը, չլինելով աքթիւ

«Ազատ Եւ Արձակուել, Որովհետեւ Հայաստանում Չարիքի Իշխանութիւնը Վերացաւ» Վահան Շիրխանեան

Զինուած խումբի գործով ամբաստանեալ, պաշտպանութեան նախկին փոխնախարար Վահան Շիրխանեանն իր ազատ արձակումը կը պայմանաւորէ Հայաստանի մէջ չարիքի իշխանութեան վերացմամբ: Այս մասին ան լրագրողներուն ըսած է երէկ՝ դատարանի դահլիճը լքելու ժամանակ:

Իսկ նոր իշխանութեան գործողութիւններու մասին գնահատական տալով Շիրխանեանն ըսած է՝ գերազանց, միայն թէ պէտք է շարունակեն նոյն կերպ:

Հարցին, թէ ինչ կը պատրաստուի ընել յառաջիկային, նախկին պաշտօնեան պատասխանած է, որ պիտի հանգստանայ եւ վերականգնուի:

Ան միաժամանակ տեղեկացուցած է, որ անազատութեան մէջ գտնուելու ընթացքին մի քանի անգամ լրագրողներուն հետ հանդիպում պահանջած է, սակայն իրեն թոյլ չեն տուած հանդիպել ՋԼՄ ներկայացուցիչներու հետ:



Նախկին փոխնախարար Վահան Շիրխանեան

Ինչ կը վերաբերի Աժ պատգամաւոր Մանուէլ Գրիգորեանի հետ առնչուող բացայայտումներուն՝ Վահան Շիրխանեանն ըսած է. «Մարդու համար ամենամեծ փորձութիւնը աթոռն է ու փողը: Մանուէլը չի դիմացել ո՛չ աթոռի, եւ ո՛չ էլ փողի փորձութեանը եւ ընկել է ամենաստոր վիճակի մէջ»:

«ԵԿՄ-ն Պէտք Է Լուծարուի» Աւետիք Իշխանեան

Երկրապահ Կամաւորներու Միութիւնը պէտք է լուծարուի: Այս մասին յայտարարած է Հելսինկեան կոմիտէի նախագահ Աւետիք Իշխանեան:

«Թող Զուլիցերիոյ մեթոտով կամաւորական ջոկատներ լինեն եւ լինեն պետութեան վերահսկողութեան տակ, ոչ թէ նման հրոսակախումբ», - ըսած է ան:

Ըստ Իշխանեանի՝ ԵԿՄ-ի մէջ կաշառակերութեան բացայայտումներու հիմքերը կու գան դեռեւս 90-ականներէն. «Ցաւօք սրտի 90-ականներէից ոչ թէ փորձարուեց ստեղծելու պետութիւն եւ ուժեղացնելու այն, այլ միայն իշխանութիւն ստեղծուեց եւ այն ամբարայնուեց: Սրանք տարբեր բաներ են: Իշխանութիւնը չձեւաւորուեց ժողովուրդի քուէով

եւ իշխանութեան չենարանը դարձաւ ուժային կառույցները: Տարբեր տիպի անձինք իրենց հրոսակախումբերով արտօնուած էին ու իրենց պատիժ չէր հասնում»:

Աւետիք Իշխանեան չի շեղանցեալին ԵԿՄ-ի մասնակցութեամբ շարք մը «սխրագործութիւններ»։ «Նրանք պայթեցրեցին կրօնական եօթ կազմակերպութիւնների, ծեծեցին, ջարդեցին, եղան սպանութիւններ: Դա արեցին ազգային-կրօնական հողի վրայ՝ ով առաքելական չի, հայ չի սկզբունքով: Այդպէս շարունակուեց մինչ օրս: Նոյն այդ երկրապահների միջոցով եւ վազգէն Սարգսեանի կողմից 1998 թուականին տեղի ունեցաւ պետական յեղաշրջում. Լեւոն Տէր-Պետրոսեանին զցեցին», - ըսած է ան:

Ոստիկանութիւնը Բերման Ենթարկած Է Սերժ Սարգսեանի Եղբայրը Եւ Դիկնապահը

Ոստիկանութիւնը երէկ Սայթ-Նովա փողոցէն բերման ենթարկած է նախկին նախագահ Սերժ Սարգսեանի եղբորը՝ Ալեքսանտր Սարգսեանին՝ ապօրինի գէնք կրելու կասկածանքով:

Նշենք, որ 62-ամեայ Ալեքսանտր Սարգսեանը, որ յայտնի է Սաշիկ անունով, 2003 -2011 թուականներուն եղած է Ազգային ժողովի պատգամաւոր, մամուլը անոր անունը կը կապէ բազմաթիւ պիզնեսներու հետ:

Աւելի ուշ ան ազատ արձակուած է:

ԱԱԾ-ի կողմէ բերման ենթարկուած է նաեւ երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի թիկնազօրի նախկին պետ, Պետական պահպանութեան ծառայութեան նախկին պետի տեղակալ, զօրավար-հազա-



Վաչական Ղազարեան

րապետ (գեներալ-մայոր) Վաչական Ղազարեանը, այն պահուն երբ ան հարիւր հազարաւոր կանխիկ տոլարներով դուրս կու գար Երեւանեան դրամատունէն:

ներգրաւուած քաղաքական գործընթացներին մէջ, մնայ էր պաշտօնում»:

Ճշտող հարցին, թէ Կարէն Կարապետեանը դուրս կու գա՞յ նաեւ

Հանրապետական կուսակցութենէն, Շարմազանովը պատասխանած է. - «Այս պահին նման որոշում չկայ, կուսակցութիւնից դուրս գալու խօսակցութիւն չի եղել»:



ԼՈՒՐԵՐ

# «Խօսել Յայկական Կողմի Ինչ-Որ Տարածքների Կորստի Մասին, Ուղղակի Անհեթեթու լինել է»։ Փաշինեան

Ատրպեյձանական կողմը կարենոր բարձունք է գրաված, այդպիսի բան տեղի է ունեցած, ֆէյսպուքեան օգտատէրերէն մէկուն ղերտարկմանն այսպէս արձագանգած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Երկու շաբթի երեկոյան ֆէյսպուքեան ուղիղ տեսակապի միջոցով վարչապետը պատասխանած է օգտատէրերու հարցերուն: Սամուէլ Չախալեանը մասնաւորապէս գրած էր, որ Փաշինեանը դեռ է մեկնաբանած Նախիջեանի հետ սահմանին տեղի ունեցած իրադարձութիւնները: Չախալեանը նշած էր, որ «տեղեկութիւնների համաձայն, հակառակորդը զգալիօրէն առաջ է շարժուել Արէնի գիւղի ուղղութեամբ՝ գրաւելով կարենոր բարձունք, ինչի արդիւնքում լուրջ առաւելութիւն է ստացել մեր դիրքերի նկատմամբ եւ ղերտարկում է Արենի գիւղը»:

Փաշինեանի պնդմամբ, այն տարածքները, որոնց հիմա կը տիրապետէ Ատրպեյձանը, միշտ ալ եղած են Ատրպեյձանի հսկողութեան տակ, եւ, ըստ վարչապետի, խօսիլ հայկական կողմի ինչ-որ տարածքներու կորուստի մասին, ուղղակի անհեթեթութիւն է:

«Անկիւնաքարային նշանակութեան հարցը հետեւեալն է՝ գրաւելով կարենոր բարձունք, այդպիսի բան տեղի է ունեցել, որովհետեւ այն տարածքները, որոնց հիմա տիրապետում է Ատրպեյձանը, էդ տարածքները միշտ էլ եղել են Ատրպեյձանի հսկողութեան տակ:

Այսինքն՝ այս առումով որեւէ բան էր փոխուել: Որոշակի դիրքերի տեղաշարժ է տեղի ունեցել: Ասեմ՝ այն, որ Ատրպեյձանը յայտարարում է, որ դէպի Երեւան-Լաչին ճանապարհը նշանառութեան տակ է առել, ժողովուրդ ջան, նրանք, ովքեր տեղեկ չեն, ասեմ, որ 1992-1993 թուականից էդ ճանապարհը նշանառութեան տակ է, եւ ճանապարհի վրայ ազդեցութեան առումով ոչ մի փոփոխութիւն բացարձակապէս տեղի է ունեցել», - ըսած է վարչապետը՝ շարունակելով: «Նախիջեանի ուղղութեամբ տեղի է ունեցել դիրքերի որոշակի տեղաշարժ, ընդ որում խօսել մեր կողմից ինչ-որ տարածքների կորստի մասին, ուղղակի անհեթեթութիւն է»:

«Ինչպէ՞ս էք պատկերացնում, որ տարածք կորսուի՝ առանց մի հատիկ կրակոցի, դա հնարաւոր է, թէ՞ հնարաւոր էր: Ուզում եմ ասել ընդամէնը, որ մարտավարական եւ ռազմական առումով որեւէ հակափոփոխութիւն տեղի է ունեցել Նախիջեանի ուղղութեամբ: Ըստ էութեան, մենք ունենք նոյն իրավիճակը, ինչ որ ունէինք մի քանի ամիս առաջ», - ըսած է Փաշինեանը:

Վկայակոչելով վիճակագրական տուեալները, ան նշած է, որ իր վարչապետ ընտրուելէն ետք հրադարի ռեժիմի խախտման մակարդակն աննախադէպ ցած է: Սակայն, ըստ վարչապետի, այսօր առաջնագիծին կան ատրպեյձանական զօրքերու որոշակի կուտակումներ:

# Յայաստան Կը Յակադարձ Ռուսաստանի Գործիչի Խօսքերուն

Ռուսաստանեան ՏԱՍՍ գործակալութեան փոխանցմամբ՝ ՌԴ Պետդումայի խօսնակ Վիաչեսլաւ Վոլոտին Պաքուի մէջ յայտարարած է, թէ Ատրպեյձանի դիրքորոշումը Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցի վերաբերեալ «միշտ եղած է կառուցողական եւ ճիշդ»:

«Դուք գիտէք, որ Ռուսաստանը հանդէս կու գայ հակամարտութեան խաղաղ կարգաւորման օգտին, հետեւաբար՝ ընենք ամէն ինչ այդ ուղղութեամբ», - յայտարարած է Վոլոտինը երէկ Բաքուի մէջ Ատրպեյձանի խորհրդարանի խօսնակ Օքթայ Ասատովի հետ հանդիպման ժամանակ: «Այդ կապակցութեամբ Ատրպեյձանը մշտապէս ճիշդ եւ կառուցողական դիրքորոշում ունեցած է: Մենք անոր յոյսն ունինք նաեւ հետագային», - ըստ ՌԱՍՍ գործակալութեան, աւելցուցած է Պետդումայի խօսնակը:

Հայաստանի Արտաքին Գործոց նախարարութեան մամուլ քարտուղար Տիգրան Բալայեանը Պետդումայի նախագահի յիշեալ յայտարարութեան հետ կապուած՝ «Ազատութեան» ըսած է ք «Պետութիւնների դիրքորոշումներն



ՌԴ Պետդումայի խօսնակ Վիաչեսլաւ Վոլոտին

այս կամ այն հարցի, յատկապէս արտաքին քաղաքական խնդիրների վերաբերեալ, արտայայտում են գործադիր իշխանութեան ներկայացուցիչների կողմից: Ռուսաստանի գործադիր իշխանութեան տեսակէտը ԼՂ հարցի հետ կապուած յայտնի է: Այն առնուազն շաբաթը մէկ անգամ հնչեցում է ՌԴ Արտաքին Գործոց նախարարութեան պաշտօնական ներկայացուցչի կողմից»:

# Վարչապետը Չընդունեց Ման Թանգիլեանի Յրաժարականը

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան ՀՀ աշխատանքի եւ հասարակական հարցերու նախարար Ման Թանգիլեանի հրաժարականին դիմումը չէ ընդունած: Այդ մասին կառավարութեան նիստին յայտարարեց ՀՀ վարչապետը:

«Տիկին Թանգիլեանի հետ որոշած ենք, որ պէտք է շարունակենք համատեղ աշխատանքը, ներառեալ՝ կուտակային կենսաթոշակային համակարգի շուրջ քննարկումները շարունակելու նպատակով», - ըսաւ Նիկոլ Փաշինեան՝ աւելցնելով, որ պէտք է աշխատիլ զայն աւելի ընդունելի եւ յուսալի դարձնելու համար: «Համակարգը լրջագոյն բարելաւման կարիք ունի եւ տիկին Թանգիլեանի, Տնտեսական զարգացման եւ ներդրումներու եւ Արդարադատութեան նախարարի հետ համաձայնած ենք աշխատիլ, որպէսզի երկու ամսուան ընթացքում ունենանք յստակ նախագիծ», - ըսաւ վարչապետը, շարունակելով: «Մենք պէտք է հանրութեան եւ մեր մէջ եղած բոլոր կասկածները փարատենք, որպէսզի վստահ ըլլանք, որ ճիշդ ճանապարհով կ'երթանք»:

Իր հերթին, Ման Թանգիլեան ըսաւ, որ իր հրաժարականին



Նախարար Ման Թանգիլեան

պատճառը կապուած է նաեւ համակարգի սկզբունքներուն հետ: «Պատրաստ ենք կարճ ժամանակի ընթացքին վերամշակելու համակարգին վերաբերեալ նախագիծը եւ ներկայացնելու հանրութեան՝ նաեւ ընդհանուր քննարկումներ իրականացնելու նպատակով», - ըսաւ Թանգիլեան՝ աւելցնելով, որ նախագիծը աշխատանքի պէտք է ներկայացուի Ազգային ժողով՝ օրէնքը 1 Յունուար 2019-էն լիարժէք կիրառելու նպատակով:

# Կարօ Փայլան Եւ Մարգար Եսայեան

Շարունակուած էջ 1-էն

տեսուէր 1915 թուականի դէպքերը պաշտօնապէս ճանչնալ որպէս ցեղասպանութիւն: Առաջարկը մերժուած էր:

Ի տարբերութիւն Փայլանի՝ Եսայեանը յայտնի է իշխանական շրջանակներու հետ սերտ յարաբերութիւններով:

Այս ընտրութիւններուն առաջադրուած հայազգի երկու թեկնածուներ՝ Լուսինէ Պիւլցումը (Ժողովուրդներու ղեմովրատական կուսակցութիւն) եւ Էլմաս Կիրակոսը

(«Լաւ» կուսակցութիւն) նախնական արդիւնքներով մէծ լիսին մէջ չեն ըլլար:

Թուրքիոյ խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքներով՝ իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութիւնը մէծ լիսին մէջ կ'ունենայ 295, Հանրապետական ժողովրդական կուսակցութիւնը՝ 146, «Ազգայնական շարժում» կուսակցութիւնը՝ 49, քրտամէտ Ժողովուրդներու ղեմովրատական կուսակցութիւնը՝ 66, «Լաւ» կուսակցութիւնը՝ 44 պատգամաւորական մանդատ:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎՍԱԿՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ



### ԵՄ-Հայաստան Գործընկերության Խորհուրդը Առաջին Նիստը Գումարեց Պրիսթլի Մեջ



Պրիսթլիի մեջ Եվրոպական Միությունը եւ Հայաստանը գումարեցին գործընկերության խորհուրդի անդրանիկ նիստը՝ 24 Նոյեմբեր 2017-ին ստորագրուած եւ միջանկեալ կիրառման մէջ մտած 1 Յունիս 2018-ին՝ ՀՀ-ԵՄ Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագրի (ՀԸԳՀ) ծիրէն ներս:

Նիստի արդիւնքներուն մասին Հայաստանի Արտաքին Գործոց նախարարութեան մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան հրապարակած համատեղ յայտարարութեան մէջ ըսուած է, որ խորհուրդը ՀԸԳՀ շրջածիրէն ներս ստեղծուած բարձրագոյն մարմին է, որ կոչուած է վերահսկելու համաձայնագրի իրականացումը եւ քննարկելու փոխադարձ հետաքրքրութիւնները:

«Գործընկերութեան խորհուրդը ողջունեց Հայաստանում վերջերս տեղի ունեցած բողոքների խաղաղ բնույթը, որոնք յանգեցրին Սահմանադրութեան շրջանակներում կառավարութեան ժողովրդավարական փոփոխութեանը», - ըսուած է յայտարարութեան մէջ: Նաեւ նշուած է, որ «Գործընկերութեան խորհուրդը ընդգծեց

Հայաստանի ընտրական օրէնսգրքում փոփոխութիւններ կատարելու կարեւորութիւնը՝ համահունչ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի առաջարկութիւններին՝ ընտրական գործընթացի նկատմամբ վստահութեան ամրապնդման համար»:

Եւրոմիութիւնը վերահաստատած է իր աջակցութիւնը ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներու ջանքերուն՝ ուղղուած Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման:

Եւրոմիութիւնը վերահաստատած է իր յանձնառութիւնը՝ աջակցելու Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու կարգաւորման, եւ յորդորած է կողմերը ներգրաւուելու այս գործընթացին մէջ առանց որեւէ նախապայմանի:

Կողմերը հաստատած են իրենց յանձնառութիւնը իրանի վերաբերեալ ստանձնած միջազգային պարտաւորութիւններու հանդէպ:

Խորհուրդը նախագահած է ԵՄ արտաքին յարաբերութիւններու եւ անվտանգութեան հարցերով բարձր յանձնակատար Ֆետերիքա Մոկերինին, հայաստանեան պատուիրակութեան ղեկավարն էր Արտաքին Գործոց նախարար Զոհրապ Մնացականեանը:

### Վերջին Շաբաթներուն Պետական Գանձը Վերականգնած է 35 Միլիոն Տոլար

Հայաստանի մէջ կաշառակերութեան բացայայտումներու արդիւնքով այս պահու գրութեամբ վերականգնուած է 18 միլիոն դրամ՝ 35 միլիոն տոլար: Այդ մասին «Կիրակնօրեայ վերլուծական Հրապարակագրականի հետ» հարցուման ժամանակ ըսած է վարչապետի խորհրդական, գնումներու ոլորտի ուսումնասիրող «Հանրային քաղաքականութեան հետազոտութիւններու ազգային կեդրոնի» նախագահ, տնտեսագէտ Արտակ Մանուկեանը:

Տնտեսագէտը միեւնոյն ժամանակ նշած է՝ այստեղ ոչ թէ գումարի չափն է կարեւորը, այլ այն, որ այս տարիներու ընթացքին Հայաստանի տնտեսութեան ապագան գողացուած է ու կասկածի տակ դրուած է: «Ներկայ պահին կարելի է

խօսել շուրջ 18 միլիոն դրամի տեսանելի վերականգնումների, կամ այդ մեխանիզմներով բացայայտուած գումարի մասին, բայց ստեղծման մի փոքր ինքնուրու մեզ կը խաբենք, եթէ միայն գումարի ետեւից ընկնենք», - ըսած է ան:

Ըստ վարչապետի խորհրդականի, գումարների ճիշդ հասցատորման պարագային շատ այլ ինդիկորներ կը լուծուին:

«Այս կառավարութիւնն ունի շատ կարճ կեանք», - նշած է տնտեսագէտը, - աւելցնելով, որ «եթէ կառավարութեանը յաջողութիւնը ամբողջը հաշուետուականութեան, թափանցիկութեան ինստիտուտների կայացուածութիւնը, սա կը լինի առաւելագոյն ձեռքբերումը, որ արեց այս կառավարութիւնը»:

### Պարուի Մեջ Կայացած Շքերթին

Շարունակուած է 1-էն

միջազգային իրաւունքը, այլ ռազմական ներուժը: Եթէ միջազգային իրաւունքն աշխատէր, տարածքները շատոնց ազատուած կ'ըլլային, յայտարարած է Ալիեւը, աւելցնելով՝ պատերազմը չէ աւարտած, աւարտած է միայն առաջին փուլը:

Ալիեւը «յաղթանակ» որակած է 2016 թուականի ապրիլեան պատերազմն ու «2018 թուականի նախիջեւանեան գործողութիւնը», ըսելով, թէ այդ յաղթանակները «աւելի բարձրացուցին Ատրպէյճանի ժողովուրդի հայրենասիրական ոգին»:

Ռազմական շքերթին ներկայ

### Հայաստանը Ստանձնեց Սեւ Ծովեան Տնտեսական Համագործակցութեան Խորհրդարանական Վեհաժողովի Նախագահութիւնը



Ալպանիոյ մայրաքաղաք Թիրանայի մէջ աւարտած է Սեւծովեան տնտեսական համագործակցութեան Խորհրդարանական վեհաժողովի (ՄՄՏՀ ԽՎ) 51-րդ նստաշրջանի աշխատանքը, որուն մասնակցած է Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ Էտուարտ Շարմազանովի գլխավորած պատուիրակութիւնը:

Ազգային ժողովի լրատուութեան եւ հանրութեան հետ կապերու վարչութեան հարցազրույցի համաձայն՝ նստաշրջանի աւարտին կառուցի նախագահութիւնը Ալպանիայէն փոխանցուած

է Հայաստանին, խորհրդանշական մուրճը յանձնուած է պատուիրակութեան ղեկավարին:

Հայկական պատուիրակութեան կազմին մէջ եղած են ՄՄՏՀ ԽՎ-ի մօտ ՀՀ Ազգային ժողովի պատուիրակութեան ղեկավար Գագիկ Մինասեանը, Գէորգ Գորգիսեանը եւ Վահէ Էնֆիաճեանը:

Նշենք, որ ՄՄՏՀ-ին կ'անդամակցին Հայաստանը, Ալպանիան, Ատրպէյճանը, Վրաստանը, Պուլկարիան, Յունաստանը, Մոլտովան, Ռումանիան, Ռուսաստանը, Սերպիան, Թուրքիան եւ Ուքրանիան:

### Շքերթ Տոնախմբութեամբ Նշուեցաւ

Շարունակուած է 1-էն

Լատիի եւ հայրենիքի համար իրենց ազատագրական պայքարը մղած քաջարի հերոսներուն: Արդարեւ անոնք անսակարկ նուիրումին եւ գոհաբերումին շնորհիւ է որ վճռորոշ դեր մը ունեցաւ Սարդարապատի ճակատամարտը, որով հիմը դրուեցաւ մեր նոր պետականութեան:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կողմէ ելոյթ ունեցաւ Լենա Մանուկեան: Ան նշեց որ յարգանքի եւ տօնախմբութեան տօն է այսօր, նաեւ հրաշալի պահն է ազգային գիտակցութեան եւ ինքնահաստատման: Թաւշեայ նոր արշալոյսներու ծագումէն ետք, այսօր հայը մեծապէս կը կառչի լիարժէք եւ մշտական անկախութիւն ապահովելու: Ան մաղթեց որ ներկայ դրութիւնը կայուն եւ հետեւողական ըլլայ:

ՌԱԿի կողմէ խօսք աւնելով Հրաչ Սէփէթճեան ըսաւ. «Սարդարապատի, Պաշ Ապարանի եւ Ղարաբաղի լիսի հերոսամարտերը անուրանալի վկայութիւնն են հայ ժողովուրդի արդար կամքին ազատասիրութեան եւ հայրենասիրութեան վեհագոյն ձգտումներուն: Ձեռք երկարենք նոր կառավարութեան, ժամն է գործի: Զօրակցինք իրար եւ ամուր պահենք Արցախն ու Հայաստանը»:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անունով իր ելոյթին մէջ Ռազմիկ Հարուն անդրադառնալէ ետք հայ կամաւորներու ազատագրական պայքարին, շեշտեց արդար դատի յաջողութեան համար ծրագրաւորուած եւ արդիւնաւէտ աշխատանքի անհրաժեշտութիւնը: Ան կարեւորեց նաեւ բոլոր մարզերու

մէջ հայ ժողովուրդի միասնականութիւնն ու համագործակցութիւնը:

Չուցադրուեցաւ պատմա-վաւերագրական տեսերիւ մը, որուն մէջ տեսարաններ կային քսաներորդ դարու առաջին ցեղասպանութեան եւ քաջարի հայ ազատամարտիկներու հերոսական պայքարէն:

Գործադրուեցաւ գեղարուեստական բացառիկ ճոխ յայտագիր մը, մասնակցութեամբ «Չուարթնոց» պարային համոյթի (գեղարուեստական ղեկավար Վարդան եւ Արմինէ Աղաճանեան), Համազգայինի «Անի» պարախումբին (գեղ. ղեկավար Եղիա Հաջօրեան եւ Սիւզի Բարսեղեան-Գարբինեան), իսկ հայրենասիրական երգերով հանդէս եկան Յարութ Յակոբեան, Սալբի Մայիլեան եւ Գագիկ Բաղալեան: Տպաւորիչ էին նաեւ Համազգայինի «Սայաթ Նովա» երգչախումբի ելոյթները (գեղ. ղեկավար՝ Գայեանէ Պաղտասարեան, խմբավար՝ Միջայլ Աւետիսեան): Բոլոր կատարումներն ալ ունէին գեղարուեստական թանկարժէք մակարդակ եւ որակ, ներկաներուն պարգեւելով բարձր տրամադրութիւն եւ հոգեկան բաւարարութիւն:

Միջոցառումի աւարտին բեմահարթակ հրաւիրուեցան ներկայ հոգեւոր չորս առաջնորդները: Յովնան Արք. Տէրտէրեան իր պաշտօնակիցներուն անունով աղօթք մը արտասանեց եւ ի մէջ այլոց ըսաւ. «Սարդարապատը՝ հիմնաքարն է Հայաստանի: Թող Աստուած անսասան պահէ հողը հայրենական»:

Փակման աթօքն ետք երգչախումբը եւ ժողովուրդը միասնաբար երգեցին «Սարդարապատ», որպէսզի «Սերունդներ, դուք ձեզ ճանաչէք, Սարդարապատից»:

գտնուած են աւելի քան մէկ տասնեակ երկիրներու բարձրաստիճան ներկայացուցիչներ, այդ շարքին՝

Պելաուսէն, Ռուսաստանէն, Ուքրանիայէն, Իսրայէլէն, Իրանէն, Վրաստանէն:



# Պարզուեց Որ ՀՀԿ-ն Ոչ Թէ Քաղաքական, Այլ Կրիմինալ Միւսուորում Է. Քաղաքագետ

ԹԱԳՈՒՀԻ ՅԱԿՈԲԵԱՆ

Ապրիլեան յեղափոխութեան արդիւնքում ձեւաւորուած կառավարութեան բոլոր քայլերին, արտաքին եւ ներքին քաղաքականութեանը, կազմակերպչականութեանը, խոշորացուցում են հետեւում մամուլն ու հասարակական-քաղաքական շրջանակները:

Hraparak.am-ի հարցերին պատասխանում է քաղաքագետ Ադասի Ենոքեանը:

-Ապրիլեան յեղափոխութեան օրերին Դուք եղել եք ԱՄՆ-ում: Վերլուծաբաններից, քաղաքագետներից շատերը այնքան են, որ Հայաստանի վարկանիշը բարձրացել է շնորհիւ թաւշայ յեղափոխութեան: ԱՄՆ-ում ի՞նչ արձագանք է գտել ապրիլեան յեղափոխութիւնը:

-Իհարկէ, Հայաստանի վարկանիշը բարձրացել է: ԱՄՆ-ում կայ դրական, բայց գուցէ արձագանք: Իսկ ամերիկահայերի մէջ կայ շատ մեծ ոգեւորութիւն, որի կապիտալիզացիան դեռ չայտնի է, թէ ինչպէս պէտք է արտայայտուի:

-Նոր կառավարութիւնը ձեւաւորուած է հիմնականում փորձ չունեցող երիտասարդ կադրերից: Կայ տեսակէտ, որ Գործառնական կառավարութիւնը աւելի շատ կատարում է պոպուլիստական քայլեր:

-Եկէք տարանջատենք երկու բան: Առաջին հերթին քայլերը պէտք է լինեն պոպուլիստական, որովհետեւ իշխանութիւնները պատրաստուած են ԱԺ նոր ընտրութիւններին: Պէտք է ընտրազանգուածին պատրաստել նոր ընտրութիւններին: Իշխանութիւններն անում են առաջին անհրաժեշտ քայլերը: Կոռուպցիան Հայաստանի ազգային անվտանգութեան ամենամեծ խնդիրն է, եւ դրա դէմ պայքարը ամենակարեւոր քայլն է:

-Քաղաքական ուժերն այսօր պատրաստ են ԱԺ արտահերթ ընտրութիւններին:

-Ես Հայաստանում չեմ տեսնում դասական իմաստով քաղաքական ուժեր: Եթէ մենք խօսում ենք Հանրապետական կուսակցութեան մասին, ապա պարզուեց, որ այն ոչ թէ քաղաքական, այլ կրիմինալ միաւորում է: Եթէ մենք խօսում ենք «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան մասին, ապա դա մի անձ շուրջ ստեղծուած եւ բարեգործութիւններ անող խմբաւորում է: Մեր սահմանադրութիւնը հենց կուսակցութիւնների վրայ հիմնուած իշխանութիւն է պատկերացում, իսկ մեր երկրում



չկան այդ կուսակցութիւնները: Այսինքն՝ հաւի եւ ձուրի պատմութիւնն է ստացուած ունենալ իշխանութիւն, որը կը ստեղծի կուսակցութիւններ, թէ՛ սպասել, որ ստեղծուեն կուսակցութիւններ, որոնք էլ իշխանութիւն կը ձեւաւորեն:

-Այնուամենայնիւ, ԱԺ արտահերթ ընտրութիւնները դէպքում ո՞ր կուսակցութիւնները կարող են, ըստ Ձեզ, յաղթահարել անցողիկ շէնք:

-Ես պատկերացում եմ, որ ԱԺ-ում տեղ կ'ունենայ իշխող կուսակցութիւնը՝ «Քաղաքացիական պայմանագիրը», միգուցէ «Ելք» դաշինքով, կը ստեղծուի լիբերալ-արեւմտամէտ կուսակցութիւն, կը ստեղծուի պրոռուսական ուժ, կը ստեղծուի ծայրահեղ հայրենասիրական՝ ֆաշիզմի գաղափարաստեղծութիւն ունեցող կուսակցութիւն: Անուններ, սակայն, չեմ կարող տալ, թէ նրանք ովքեր կը լինեն: Այդ ուժերն էլ կը պայքարեն՝ ԱԺ-ում տեղ գտնելու համար:

-Իսկ ՀՀԿ-ն կ'ունենա՞յ շանս տեղ գտնելու նոր ԱԺ-ում:

-Դժուար է ասել, որովհետեւ որքան ուշ լինեն ընտրութիւնները, այնքան ՀՀԿ-ն քայքայուած կը լինի:

-Իսկ ո՞րը կարող է լինել ներկայ իշխանութիւններին ընդդիմադիր ուժ:

-Նշածս բոլոր ուժերն էլ այս կամ այն չափով կարող են լինել ընդդիմադիր: Մէկը կարող է ասել, թէ իրենք բաւարար չափով եւրոպամէտ չեն, միւսը կարող է ասել, թէ բաւարար չափով ռուսամէտ չէք:

-Մերժ Սարգսեանը »ժառանգութիւն« թողեց ՀՀԿ-ն համաձայնագիրը: Իշխանափոխութիւնից յետո՞ւ

Շար.ը էջ 19

# Ընկերուի Լեւոն Մանուկեանի Ամբողջական Խօսքը՝ Հայաստանի Հանրապետութեան 100- Ամեակի Տօնակատարութեան

Միրելի ազգակիցներ Այսօր յարգանքի եւ սօնախմբութեան օր է:

Այսօր նաեւ Հարիւրամեայ ազգային ինքնահաստատման եւ գիտակցութեան այդ հրաշալի պահն է:

Այս օրերուն, մենք ազգովին կը նշենք Մայիսեան Հերոսամարտերուն եւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան 100 - ամեակները, Հայաստանի մէջ՝ պետական մաշտապով, իսկ սփիւռքի տարածքին՝ աւանդական կուսակցութիւններու աննախադէպ համագործակցութեամբ: Աննախադէպ, որովհետեւ այսօր վերապահութիւններ չկան եւ մենք ըստ արժանուցի կը նշենք մեր պատմութեան մէջ անկիւնադարձային նշանակութիւն ունեցող այս սօները՝ որոնց շնորհիւ մեր ժողովուրդը կարողացաւ վերապրիլ, գոյատեւել եւ կառուցել իր երկիրը, ապրելով գարթօնքի շրջան՝ յատկապէս մշակութի, արուեստի, գրականութեան եւ շինարարութեան բնագաւառներէն ներս, պահելով նաեւ իր ինքնուրոյն ազգային յատուկ ինքնութիւնը:

Մէկ դար առաջ, հայ ժողովուրդին համար Սարգարապատի հերոսամարտը եղաւ գոյատեւման պայքարի մեծագոյն յաղթանակը, սերունդները միացնող՝ հանուն ազատութեան եւ հանուն մեր հայրենիքի անկախութեան, դառնալով անջնջելի խորհրդանիշը՝ կեանքի, ազատութեան եւ յաղթանակի:

Այսօր առաջին հերթին մենք կը խոնարհինք մեր բոլոր հերոսներու յիշատակին, ազատագրական պայքարի բոլոր մեր սրբազան քաջերուն, որոնց համար միակ հնարն էր պայքարիլ՝ հայ ժողովուրդի ազատութեան համար՝ եւ որքան սուղ է անկախութիւն ձեռք բերել եւ աւելի դժուարը՝ գալն պահել:

Մէկ դար առաջ եւ աւելի, Մենք՝ ազգային երեք կուսակցութիւններս, ստեղծուեցանք հայ ազգի առաջ գտնուող լուրջ հրամայականներու լոյսին տակ. անոր ընկերային, քաղաքական եւ տնտեսական ազատութիւնը ապահովելու եւ ապագայի բաղձանքները մարմնացնելու համար: Մեր առաջնահերթ պարտականութիւնը եղած է՝ ու պէտք է մնայ, հայ ժողովուրդի իրաւունքները պաշտպանել եւ պայքարիլ անարդարութեան ու սպիտակութեան դէմ:



Մենք պէտք է մնանք անշեղ մեր սկզբունքներուն եւ կայունօ մեր ուղիին մէջ:

Հայրենիքի մէջ, անցնող տարիներու բռնութիւններն ու վարչական փտածութիւնը որքան ժխտական հետեւանքներ ունեցաւ մեր ժողովուրդի բարօրութեան եւ բարգաւաճման մէջ, յառաջացնելով մեծ յուսահատութիւն, աղքատութիւն, ցաւ եւ ի վերջոյ՝ հայրենալքում:

Այսօր, մեր միտքն ու հոգին ու մեր կեդրոնացումը Հայաստանին վրայ է, որովհետեւ անոր հզօրացումը եւ բարգաւաճումը միակ գրաւականն է մեր ազգի գոյութեան, յառաջդիմութեան եւ բարօրութեան:

Հայաստանի Առաջին Հանրապետութեան ստեղծումէն հարիւր տարի ետք, հայ ժողովուրդը կը գտնուի շատ կարեւոր, ոգեւորիչ եւ լուրջ ժամանակաշրջանի մը շեմին, եւ պատմութեան մէջ կ'արձանագրէ վերագարթնումի եւ բարեկարգութեան իսկական նախաձեռնութիւններ, օրէնսդրութեան վերահաստատում, հաշտեցման գործընթաց, ցուցաբերելով ազգային միասնականութեան դերագանց ոգի եւ վճռակամութիւն:

Մենք ուժեղ ենք, երբ մեր հայրենիքը ուժեղ է:

Երբ ներքնապէս ուժեղ ենք, դուրսն ալ անպարտ ենք եւ անխորտակելի:

Յարատեւ գիտակցութեամբ եւ արթնութեամբ պէտք է նեցուկ

Շար.ը էջ 19

LIFE INSURANCE    INDIVIDUAL & GROUP HEALTH INSURANCE    LONG TERM CARE    MEDICARE    DENTAL & VISION    DISABILITY



**M MARONIAN**  
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

Call us today!

**(818) 500 9585**  
**(818) 269 0909**

**Bedros & Siamanto**  
805 EAST BROADWAY, GLENDALE, CA 91205

CA Insurance Lic. #0494056 / #0C99815  
MARONIANINSURANCE.COM



### Նիկոլ Փաշինեանը Պարգևատրուեց «Արուեստի խաղաղութեան» Պատուոյ Ոսկէ Մետալով



2018թ-ի Յունիսի 12-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանն ընդունեց «Արուեստի խաղաղութիւնը» կազմակերպութեան հիմնադիր նախագահ Դանիէլ Վարուժան Հեճինեանին եւ կազմակերպութեան հայաստանեան ներկայացուցիչ Հեղինէ Գէորգեանին: Հանդիպմանը ներկայ էին նաեւ մշակոյթի նախարար Լիլիթ Մակունցը եւ վարչապետի մամուլի քարտուղար Արման Եղոյեանը:

Զրոյցի ընթացքում Հեճինեանն իր խօսքում նշեց, որ պարոն վարչապետը վաշելում է համայն հայութեան սէրն ու վստահութիւնը, եւ պատմութեան մէջ սա բացառիկ երեւոյթ է, երբ հրապարակում ժողովուրդն է ընտրում իր վարչապետին:

Հանդիպման վերջում Հեճինեանը հանդէս եկաւ ելոյթով.

«2014 թ-ին համահայկական 5-րդ համաժողովի շրջանակներում ինձ առիթ ընծայուեց ծանօթանալ այն ժամ ազգային ժողովի պատգամաւոր Նիկոլ Փաշինեանի հետ: Պոսթոնից հետեւելով Հայաստանի քաղաքական կեանքին եւ ծանօթ լինելով նրա գործունէութեանը՝ ծանօթանալուց եւ այցեքարտեր փոխանակելուց յետոյ նրան հարցրի՝ պարոն Փաշինեան Ձեզ այդքան դուրս որտեղի՞ց:

Իմ հարցի պատասխանը ստացայ 4 տարի անց: Պարզուեց, որ պատմութիւնն է ծնում յեղափոխութիւնը, ժողովուրդն է իրականացնում, իսկ առաջնորդը նշանակում է ի վերուստ: Նրա դուրսը պայմանաւորուած է ժողովրդի սիրով, համերաշխութեամբ, փոխադարձ վստահութեամբ եւ միասնականութեամբ, որտեղ չկայ ամերիկահայ, կամ սիրիահայ, այլ կայ մէկ միասնական հայ ժողովուրդ, որոնք մէկ մարդու նման կատարում են իրենց առաջնորդի հրահանգները՝ որդեգրելով ձեռքերը վեր, խաղաղ, առանց բռնութեան պայքարի ձեւը:

«Արուեստի խաղաղութիւնը» կազմակերպութիւնը հիմնուած է 2003 թ-ին, Պոսթոնում, որը կրթական, մարդասիրական, անշահոյթ կազմակերպութիւն է, չունի ոչ մի կուսակցական կամ կրօնական ուղղուածութիւն, որն օգտագործում է արուեստի համընդհանուր լեզուն մարդկանց բարօրութեան, հակամարտութիւնների խաղաղ լուծման, հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ արտերկրում Հայաստանի հեղինակութեան բարձրացման համար:

«Արուեստի խաղաղութիւնը» կազմակերպութիւնը ձօնուած է աշխարհում խաղաղութեան պահպաններին, խաղաղութիւն իրականացնողներին եւ բոլոր նրանց, ովքեր իրենց կեանքը վտանգում են մարդկանց բարօրութեան համար [www.peaceofart.org](http://www.peaceofart.org):

Ուստի, «Արուեստի խաղաղութիւնը» կազմակերպութիւնը պարգևատրում է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանին «Արուեստի խաղաղութիւնը» կազմակերպութեան պատուոյ ոսկէ մետալով խաղաղ թաւշեայ յեղափոխութեան համար: Ստորագրուած Մայիսի 8-ին, 2018 թ.»:


### Հայկական երգ ու Պար Ուաշինկթոնի Կեդրոնում

Յունիսի 28-ից Յունիսի 1ը, իսկ այնուհետեւ Յունիսի 4-ից 8ը ամերիկեան Սմիթսոնեան հաստատութեան ամենամեայ մշակութային փառատօնի շրջանակներում Ուաշինկթոնում հնչելու են հայ երաժիշտների կատարումները: Ամերիկեան մայրաքաղաքի Ազգային Զբօսավայրում, որը Կոնգրէսի եւ Սպիտակ տան միջեւ ընկած տարածքում է, Յունիսի 28-ին հանդէս կը գայ



Արթօ Թունչբոյաջեանի Armenian Navy Band-ը: Յաջորդ օրը

### Յարութեադարգեան Յեղասպանութեան Թանգարանին կը Նուիրէ Այնթապի Զերոսամարտէն Բացառիկ Լուսանկարներ



Ընդհանուր առմամբ ամերիկահայ բարերարը Հայաստանին նուիրաբերել է շուրջ 220 մլն ԱՄՆ տոլար:

**INNOVATIVE**  
 Designs  **Manufacturing, Inc.**

[idmifurnishings.com](http://idmifurnishings.com)



**ՀԲԸՄԻ ՎԱՉԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ  
11-ՐԴ ՊԱՏՈՒԱԲԵՐ ՀՈՒՆՁՔԸ  
Ամավերջի Հանդես Եւ Վկայականաց Բաշխում**



Շաբաթ, 9 Յունիս 2018-ին, երեկոյեան ժամը 3-ին, ՀԲԸՄ-ի Վաչէ եւ Թամար Մանուկեան կատարողական արուեստներու սրահին մէջ տեղի ունեցաւ ՀԲԸՄ-ի Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարանի ԺԲ. տարուան ԺԱ. հունձքի ամավերջի հանդէսն ու վկայականաց բաշխումը:

Վարժարանիս շրջափակը խուռնեամբ բազմութեամբ կը խայտառ այդ երեկոյ: Անասման հը ծնողներու, մեծ ծնողներու, հարազատներու, տնօրէնութեան եւ ուսուցիչներու ուրախութիւնը, ի տես հասակ առած ու մտապէս հասունցած 35 շրջանաւարտներուն:

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Վարժարանիս Հայագիտական Բաժանմունքի պատասխանատու տնօրէն Գրգոր Գրգորեան:

Վարժարանիս տնօրէն՝ տիար Մայքըլ Փրայթ, տնօրէնի իր պատգամը փոխանցեց շրջանաւարտներուն:

Ապա հանդիսավարուհին յաջորդաբար բեմ հրաւիրեց Վարժարանիս տնօրէնը եւ Հոգաբարձական կազմի անդամ՝ տիկ. Սիլվիա Գարայեանը, որպէսզի կատարեն վկայականաց բաշխումը: Նաեւ բեմ հրաւիրուեցան Վարժարանիս Հոգաբարձուհի Գրգորեանը, որպէսզի արձանագրէ շրջանաւարտներու անունները:



նատու՝ օրդ. Լորա Գուլոմմեանը, ապա բեմ հրաւիրեց Վարժարանիս կրթական համակարգի պատասխանատու՝ Տիկ. Գոհար Ստամբոյեանը, որպէսզի վարչ օրուան հանդիսավարութիւնը:

Պաշտօնական հանդիսութիւնը սկսաւ շրջանաւարտներուն դէպի սրահ հանդիսաւոր մուտքով, որոնք յաջորդաբար երգեցին Ամերիկայի, Հայաստանի եւ ՀԲԸՄ-ի քայլերգները, առաջնորդութեամբ պրն. Պարթեւ Կիւլիւմեանի:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Վարժարանիս 2009 թուականի շրջանաւարտներէն տղթ. Վահէ Պողոսեան:

Շրջանաւարտ հունձքի բարձրագոյն գնահատական ունեցող երկու աւարտականներ՝ Դաւիթ Քէշիշեան եւ Նայիրա Մարգարեան, առաջինը հայերէնով իսկ երկրորդը անգլերէնով իրենց հրաժեշտի ուղերձները յղեցին ներկաներուն:

Օրուան պատգամաբերը ներկայացուց Հոգաբարձութեան անդամ՝ տիկ. Լէսլի Շահինեան: Պատգամաբերն էր LegalLab-ի հիմնա-

նիս Հայկական բաժանմունքի ուսուցիչներ՝ օրդ. Լորա Գուլոմմեանն ու պրն. Նորայր Տատուրեանը, որոնք մէկ առ մէկ առաջ գալ հրաւիրեցին շրջանաւարտները եւ յայտարարեցին անոնց ստացած մրցանակները:

Աւարտին բեմ հրաւիրուեցաւ Արեւմտեան Թեմի Առաջնորդի ներկայացուցիչ՝ Արժ. Տ. Ներսէս քհն. Հայրապետեան: Քահանայ հայրը իր շնորհաւորութիւնները յայտնեց շրջանաւարտ աշակերտներուն, անոնց ծնողներուն, Վարժարանիս տեսչութեան եւ ուսուցչական կազմին, եւ ապա "Պահպանիչ" ով օրհնեց բոլոր ներկաները:

Պահը հասած էր իր աւարտին: Շրջանաւարտ աշակերտները հանդիսաւոր թափօրով ելք կատարեցին սրահէն, եւ միացան իրենց ծնողներուն, որոնք ուրախութեան արցունքներով գիրկընդխառնուեցան իրենց զաւակներուն հետ:

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն, կազմակերպութեամբ Մոնոլա-Օժանդակ Մարմին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ  
ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ  
ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՎԱՐժԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ**



**ՍՕՆԱ ՊԱՏԱԼԵԱՆ**

Ուրբաթ 11 Մայիս 2018ի երեկոյեան Սահակ-Մեսրոպ Վարժարանի սրահը լեցուն էր ծնողներով եւ բարեկամներով, ուր տեղի ունեցաւ Հայաստանի առաջին հանրապետութեան 100 ամեակի նուիրուած տօնակատարութիւնը:

Սահակ-Մեսրոպ Վարժարանի բոլոր աշակերտներու մասնակցութեամբ ունեցանք զրոյց եւ գեղարուեստական յայտագիր: Առաջին առթով Տիկ. Սօնա Պատալեանի առաջնորդութեամբ երգուեցաւ «Հայր Մերը» եւ Հայաստանի օրհներգը «Մեր Հայրենիք» ներկայ ժողովուրդի մասնակցութեամբ:

Ապա Վեր. Էքմէքճեանի աղօթքով հանդէսը բացուած յայտարարուեցաւ:

Արդէն աշակերտները բեմահարթակին վրայ շարուած էին եւ պատրաստ էին իրենց բաժիններով հանդէս գալու:

Ձեռնազանգակներով նուագեցին Ը. Կարգի աշակերտները: Ահաւասիկ հասած էր զրոյցի պահը, ուր «Եթէ պարիկ մը ըլլայի»

հարցումին պատասխանները իմացանք, որոնք հաճելի եւ հետաքրքրական էին:

Այս հրաշալի պատասխաններէն ետք զրոյցը զարգացաւ եւ հասաւ մինչեւ Հայաստանի հանրապետութեան անկախութեան 100 ամեակի պատմական եւ նշանակալից թուականին:

Յիշուեցաւ տեղի ունեցած կոխները, դեկավարները, նպատակը եւ մեր հայրենիքի նուաճումները եւ յաջողութիւնները:

Մէջ ընդ մէջ կատարուեցան բազմաթիւ ազգային եւ հայրենասիրական խմբերգներ: «Սարդարապատ» խմբերգը աշխուժացուց եւ խանդավառեց մթնոլորտը, որուն յաջորդեց Գ. դասարանի աղջիկներու հայկական պարը, իսկ վերջին խմբերգն էր «Գետաշէն»ը, որ խրախուսեց ներկաները, որոնք միացան խումբին:

Այս յայտագրով մեր աշակերտներուն մէջ ազգային ոգին աւելի դրոշմուեցաւ, ըլլալու իսկական հայորդիներ պատիւ բերելու մեր հայրենիքին եւ չմոռնալ հայերէն լեզուն եւ պատմութիւնը:

Վարժարանիս Հոգաբարձութիւնն ու Տնօրէնութիւնը ի սրտէ կը շնորհաւորեն Վարժարանիս 11-րդ հունձքն ու ծնողները, մաղթելով անոնց յարատեւ վերելք եւ նորանոր յաջողութիւններ:

Սրտագին շնորհաւորութիւններ նաեւ ուսուցչական կազմին ու պաշտօնէութեան, իրենց տարած նուիրեալ աշխատանքին համար՝ յաչս նոր սերունդի փայլուն ապագային:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name:-----

Address:-----

City:----- State:----- Zip Code:-----

Country:-----

Tel:----- Email:-----



### ՎԱՆԱԶՈՐՑԻ ԲԱԶՄԱՆԴԱՄ ԸՆՏԱՆԻՔԸ ԴՈՄԻԿԻՑ ՏԵՂԱՓՈԽՈՒԵՑ ՆՈՐ ՏՈՒՆ



«Ես տան մէջ եմ մեծացել, չգիտէի՝ դոմիկին ինչ է», - Աստղիկն ամուսնու թիւնից յետոյ տեսաւ ու զգաց յետերկրաշարժեան վանաձորի դոմիկային կեանքը: Հայաստանի հիւսիսը փլատակների տակ թողած երկրաշարժի տարում է ծնունդ, աղէտի գոտուց հեռու, բայց ընտանեկան կեանքը պէտք է աղէտալի պայմաններում սկսեր ու անցկացնեն:

Կնոջ համար 8 տարի է, իսկ Բագրատն արդէն 28 տարի է

քի եկամուտը օգնութեան նպաստն է՝ 30 հազար դրամ, նոյնքան է Բագրատի մոր՝ տիկին Անահիտի թոշակը:

«Ամուսինս յոյս չունէր, բայց ես հաւատում էի, որ Աստուած իմ տան յոյսը կը դնի մի բարի մարդու սրտում ու կը տայ ինձ», - ասում է Աստղիկը: Նրա երգանքն իրականութիւն է: Վանաձորում ապրող Մնացականեանների 6 հոգանոց ընտանիքին բնակարան նուիրեց ԱՄՆ-ում գործող «Հա-



դոմիկում է ապրում: Դոմիկում է կորցրել հօրը. 54 տարեկանում մահացել է տան կենցաղային պայմանների պատճառով առաջացած հիւանդութիւններից: Բագրատի մայրն էլ ապրում է ծանր ախտորոշումով. 57-ամեայ Անահիտ Աւետիսեանն արեան քաղցկեղ ունի:

Աստղիկն ու Բագրատը 3 երեխայ են մեծացնում: Աննան առաջին դասարանում է սովորում, որդին՝ Սերգեյը, 6 տարեկան է, իսկ տան կրտսերը 3-ամեայ Անին է: Մնացականեան ամուսինները մշտական աշխատանք չունեն. ընտանի-

յաստան հիմնադրամ» կազմակերպութեան բարերար Զարեհ Շահազալդեանը:

Բագրատն ու Աստղիկը 3 երեխաների եւ Անահիտ տատիկի հետ ժամ առաջ տեղափոխուեցին նոր տուն՝ հիմնովին նորոգուած, կահաւորուած եւ կենցաղային տեխնիկայով համալրուած, իսկ վանաձորի կեդրոնում տեղակայուած հետերկրաշարժեան դոմիկը հիմնովին կը քանդուի՝ իր հետ տանելով Մնացականեանների 28 տարուայ մղձաւանջը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամ

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԱԻԵՏԻՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱԲԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ



Շաբաթ, Յունիսի 16-ին Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Երեւանի Աւետիսեան վարժարանի շրջանաւարտներու աւարտական հանդիսութիւնն էր, որու ընթացքին վարժարանը բարի երթ մաղթեց դէպի նոր կեանք ընթացող տասներկորդ դասարանի աւարտականներու իր երկրորդ հունձքին:

Աւարտական այս հանդիսութիւնը մեծ իրադարձութիւն է

Աննա Ստեփանեանը:

Հանդիսութեան բանախօսն էր հանրածանօթ պատմաբան Թաներ Աքչամը՝ առաջին Թուրք մտաւորականներէն՝ որ ճանչցած եւ բացայայտօրէն քննադատած է Հայոց Յեղասպանութիւնը: Պր. Աքչամը իր ողջոյնի խօսքով աշակերտներուն յորդորեց ըլլալ համարձակ ու նորարար, ունենալ սեփական տեսակէտ, հարկ եղած պարագային պաշտպանել զանոնք եւ պայքարիլ



Աւետիսեան վարժարանի կեանքէն ներս: Ամէն տարի այս հանդիսութեան իրենց ներկայութեամբ կը պատուեն դպրոցի բարերարներ՝ Տէր եւ Տիկին Եղուարդ եւ Փամելա Աւետիսեանները, վարժարանի աշակիցներ, միջազգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, Հոգաբարձութեան անդամներ, լրագրողներ, ինչպէս նաեւ արտասահմանէն ժամանած շարք մը հիւրեր: Այս տարի պատուոյ հիւրերու շարքին կը գտնուէին նաեւ Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ Գիտութեան նորանշանակ Նախարար Արայիկ Յարութիւնեանը, Փոխ Նախարար Յովհաննէս Յովհաննիսեանը եւ Երեւանի Քաղաքապետարանի Հանրակրթութեան վարժութեան Պետ՝

գիրենք դիմազրաւող անարդարութիւններուն դէմ:

Շրջանաւարտներուն շնորհաւորեցին եւ բարի երթ մաղթեցին նաեւ բարերարներ Եղուարդ եւ Փամելա Աւետիսեանները, Աւետարանչականի Հայաստանի ներկայացուցիչ Յարութ Ներսիսեանը եւ դպրոցի Տնօրէն Մելանիա Գեղամեանը: Հանդէսի աւարտին շրջանաւարտները հանդիսաւորապէս ստացան իրենց աւարտական վկայականները:

Շնորհաւորութիւններ աւարտականներուն, մաղթելով որ հանդիսութեան հնչած բոլոր բարեմաղթութիւնները կիրականան եւ Աւետիսեան Դպրոցը բազմաթիւ առիթներ կ'ունենայ իր շրջանաւարտներով հպարտանալու:

**OFFICE SPACE FOR RENT IN PASADENA**

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով  
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ**

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)  
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680



### ԱՉԴԵՑԻԿ ԿԻՆԵՐԸ ԻՆՉՈՒՄ ԱԻԵԼԻ ՅԱԶՈՂԱԿ ԵՆ ԿԵԱՆՔԻ ՄԵՉ

Շատեր կը կարծեն, որ ուժեղ եւ ազդեցիկ ըլլալը շատ վատ յատկանիշ է կնոջ համար: Սակայն նման կանայք աւելի յաջողակ ու երջանիկ են կեանքի բոլոր ոլորտներուն մէջ՝ սիրային հարցերու, սեռային յարաբերութիւններու, աշխատանքի, գործարարութեան եւ այլն: Իսկ ինչո՞ւ:

- Անոնք չեն վախնար արտայայտելու այն, ինչ կ'ուզեն:

Ուժեղ եւ ազդեցիկ կանայք կ'ըսեն այն, ինչ կը մտածեն: Անոնք կը կարծեն, թէ ամէն մարդ իր տեսակէտը ունի եւ վստահաբար կրնայ արտայայտել զայն:

- Անոնք ինդիքներէն չեն խուսափիր: Անոնք ինդիքներ կը փնտռեն եւ դիւրութեամբ կը յաղթահարեն զանոնք: Կարելի է ըսել՝ մեծ ուրախութեամբ կը լուծեն ու առաջ կ'անցնին: Հետեւաբար, այս կանայք աւելի մեծ կենսափորձ ունին քան միւսները:

- Ուժեղ ըլլալը անոնց բնաւորութեան լաւագոյն գիծն է:

Այս կանայք չեն փորձեր ուժեղ թուիլ, անոնք այդպէս են. հաւանաբար, այդպէս կը ծնին:

- Անոնք ինքնավստահութեան պակաս չեն զգար: Նման կանայք շատ ինքնավստահ են եւ գիտեն յարգել իրենց կարծիքը:

- Անոնք գիտեն, որ ինչի ընդունակ են եւ կը ձգտին հասնելու իրենց նպատակներուն: Անոնք երբեք չեն սահմանափակուիր նուազագոյնով: Այս տեսակ կանայք պէտք է հասնին իրենց ցանկութեան: Անոնք չեն արդարանար ուրիշի դիմաց: Կը փորձեն ցոյց տալ իրենց նուազութիւնները:

- Անոնք գիտեն համաձայնիլ: Այսպիսի կանայք հիանալի բանակցութիւններ կը վարեն եւ յաջողակ կերպով կը կառավարեն իրենց գործերը:

- Անոնք թոյլ չեն տար, որ կեանքը անցնի իրենց կողքէն: Անոնք ֆիզիքապէս չեն կրնար միշտ նոյն տեղը նստիլ: Անոնք ամէն կերպով կը փորձեն ուրախ եւ հետաքրքրական ժամանց անցընել:

- Անոնք միշտ պատրաստ են: Այս կանայք կրնան դուրս գալ որեւէ իրավիճակէ: Անոնց անհնար

է փաստի առջեւ կանգնեցնել: Ինչ ալ որ դուք ընէք, անոնք ձեզմէ երկու քայլ առաջ են:

- Անոնք չեն հետեւիր համընդհանուր կանոններուն: Իրականութեան մէջ այս կանայք ընդհանրապէս ո'չ մէկ կանոնի կը հետեւին:

- Անոնք չեն վախնար ըսելու, որ դուք սխալած էք: Շատեր կը վախնան ճշմարտութիւնը ըսելու, քանի որ չեն ուզեր վիրաւորել դիմացինը: Բայց երբ խօսքը կը վերաբերի ուժեղ եւ ազդեցիկ կանանց, ամէն ինչ այլ է:

- Անոնց գլխաւոր նպատակը՝ հասնիլ առաւելագոյնին:

Կարելի է, թէ ինչով կը զբաղին անոնք: Այս կանայք իրենց գործը կ'ընեն 110 տոկոսով: Երբեք մի' մտածէք, որ ուժեղ եւ ազդեցիկ կինը որեւէ առաջադրանք կամ յանձնարարութիւն գլուխ չբերէ:

- Անոնք չեն ստիպեր ձեզ դժուար որոշումներ կայացնել:

Սովորաբար յարաբերութիւններու մէջ դժուար որոշումներ կը կայացնեն տղամարդիկ, բայց այս կանանց պարագային ամէն ինչ այլ է: Անոնք կրնան իրենց ուսերուն վերցնել այդ պատասխանատուութիւնը:

- Անոնք ձեզի ապահովութեան զգացում կու տան: Ուժեղ եւ ազդեցիկ կանանց հետ ապրիլը աւելի դիւրին ու յարմար է:

- Անոնք յստակ գիտեն, թէ ինչ կ'ուզեն: Ուժեղ կինը երբեք չ'ըսեր, որ չի գիտեր ինչ պէտք է ընէ այս կամ այն հարցով: Ան իր որոշումներն ու ընտրութիւնները կը կատարէ առանց երկմտելու:

- Անոնք թոյլ չեն տար յիմարացնելու իրենց: Ազդեցիկ կանայք յարաբերութիւններու հարցով հազուադէպ փոխզիջման կը դիմեն: Անոնց շատ դժուար է յիմարացնել կամ խաբել:

- Անոնք պատրաստ են նոր երեւոյթներ փորձելու: Այս կանայք միշտ նոր զգացողութիւններ կը փնտռեն եւ կ'ապրին հետաքրքրական կեանքով:

- Անոնք երբեք չեն ամչնար իրենց կատարած քայլերէն: Ասիկա անոնց համար հաստատուն կանոն է:

### ՍԻՐՈՅ ՄԱՍԻՆ ԱՅՍ ՓԱՍՏԵՐԸ Կ'ԻՄԱՆԱՆ ՄԻԱՅՆ ԴԱԲԱՃԱՆՈՒԹԻՒՆ ԱՊՐԱԾ ԿԱՆԱՅՔ

- Դուք կ'իմանաք, որ «ընդմիշտ սէրը» միշտ չ'ըլլար: Այդ մասին ընդունուած է խօսիլ, բայց սիրային յարաբերութիւնները ա'յն են, ինչը մշտական ուշադրութիւն կը պահանջէ, ջանքերու մշտական ներդրումներ: Եւ մեզմէ իւրաքանչիւրը պիտի ուզէր անմիջապէս երջանիկ կեանք ունենալ առաջին անգամէն: Բայց ոչ-բոլոր յարաբերութիւնները կ'արժեն, որ կառչիք անոնցմէ:

Եթէ ձեր ցաւը անտանելի է եւ դուք չէք կրնար հաշտուիլ ատոր հետ, խիզախօրէն անցէք նոր սէր փնտռելուն: Երբեք մի' կառչիք յարաբերութիւններէն, որոնք արդէն «չորցած են»: Միայն թէ որոնելու գացէք ո'չ թէ նոյն միաձիտ հայեացքով, այլ՝ թերահաւատութեան փշրանքով մը:

- Դուք կ'իմանաք, որ խանդը երկրի վրայ ամենավտանգաւոր յոյզն է: Յոյզը այն զգացումն է, որ անփոփոխ կերպով կը գործի դէպի կոկորդը, երբ դաւաճանութեան ականատես կը դառնաս:

Դիւրին է մտածել, թէ ոչ, դուք չէք խանդիր եւ ընդհանրապէս ձեր ինքնատիրապետումը կը բաւէ, որ ձեզի խելամիտ պահէք իւրաքանչիւր իրավիճակի մէջ: Բայց այդպէս չէ: Կը շտապենք վշտացնել ձեզ. մենք բոլորս մարդիկ ենք եւ հաւասար չափով կրնանք չնկատել, թէ մեր բնագոյնը ինչպէս դուրս կու գան վերահսկողութենէ: Խանդը ո'չ միայն այն է, երբ դուք ջղախիտ վիճակի մէջ ամանեղէն կը ջարդէք եւ կ'ուզէք հնարաւորինս արագ ջարդել այդ տղու գլուխը: Խանդը զգացում է, որ կրնայ տարիներով ներսէն այրել ձեզ: Բայց ահա թէ ինչի մասին պէտք է մտածէք նման իրավիճակներու մէջ. ձեզ դաւաճանած մարդը արժանի չէ ձեր ցասման, այլ՝ միայն խղճահարութեան:

- Դուք կ'իմանաք, որ մարդիկ ի վիճակի են վարուելու հրէշաւոր եղանակով: Երբ մարդուն կը դաւաճանեն, անոր բնաւորութեան մէջ սովորաբար կը սկսի եսասիրութեան առողջ չափաբաժին դրսեւորուիլ: Մարդիկ ի վիճակի են ամենանողկալի արարքները թոյլ տալու անոնց

հանդէպ, որոնց կ'ըսեն, թէ կը սիրեն: Դուք կրնաք ապշիլ, թէ որոշ մարդիկ ինչերու պատրաստ են դիմելու իրենց սեռային ցանկութիւնը բաւարարելու համար:

Բայց եթէ ոեւէ մէկը որոշէ ձեզ խաբել, դուք պէտք է յիշէք. գլխաւորը սեփական բնագոյններէն եւ այդ մարդոցմէ աւելի բարձր ըլլալն է: Անոնցմէ բարձր ըլլալը: Շատ մեծ մարդոց հետ անոնց սիրելիները շատ եւ շատ վատ վարուած են: Հաւանաբար այդ պատճառով ալ անոնք դարձած են այնպիսի «ինչպիսին մենք կը ճանչնանք» գիրենք:

- Դուք կ'իմանաք, որ յարաբերութիւններու մէջ ամենակարեւորը վստահութիւնն է: Մարդոց միջեւ յարաբերութիւններուն մէջ վստահութենէն աւելի կարեւոր բան չկայ: Երբ անիկա կը ջարդուի, յարաբերութիւնները անխուսափելիօրէն կը քանդուին:

Ասիկա հաստատ է: Եթէ դուք չէք կրնար վստահիլ մէկուն, անոր հետ յարաբերութիւնները դատապարտուած են ձախողման: Երբ դուք կը խաբէք ոեւէ մէկը, անոր կողմէ իսկական վստահութիւնը վերադարձնելը շատ դժուար կ'ըլլայ: Վստահութիւնը այն է, որ տարիներով կ'աճեցուի եւ որ հնարաւոր է ջարդել մէկ օրուան մէջ: Դուք արժանի էք անոր, որ վստահիք մտերիմներուն: Աւելի քիչին մի համաձայնիք:

- Դուք կ'իմանաք, որ միայն սէրը միշտ չէ որ բաւարար է:

Մէրը երբեք չափէն շատ չ'ըլլար: Մէրը մեծ աշխատանք կը պահանջէ եւ փոխադարձ պարտաւորութիւններու մեծ քանակ:

Ասիկա նման է մարտի: Որեւէ յարաբերութեան մէջ շատ տգեղ պահեր կան: Երբեմն դուք իրարու սարսափելի բաներ կ'ըսէք:

Բայց ի վերջոյ կայ նաեւ իսկական, յագեցած կեանք: Բայց սէրը ո'չ միայն խաղ է եւ յարաբերութիւններու պարզում, այլեւ՝ հոգատարութիւն: Մէրը ուժեղ զգացում է, բայց եթէ անիկա հոգատարութեամբ չի սնուցուիր, ի վերջոյ յաճախ դաւաճանութեամբ ալ կ'աւարտի:

կը խթանէ մակերիկամներու եւ ենթաստամոքսային գեղձի աշխատանքը: Մենք, ի դէպ, ատոր շնորհիւ է, որ այդքան երջանիկ կը զգանք համբուրութեան ժամանակ, քանի որ այդ օրկանները կը զօրացնեն նէյրոպէսիկ հորմոններու արտադրանքը, որոնց շնորհիւ սիրահարները կը մոռնան աշխարհի մէջ ամէն ինչի մասին:

5) Համբուրները նաեւ հոյակապ կերպով կը լուծեն կնճիւններու եւ վաղաժամ ծերացման ինդիքները, քանի որ դէմքին համար հրաշալի մարզանք են: Համբուրի ժամանակ կը գործածուի դիմային 34 մկան, իսկ արեան ուժեղ մատակարարումը կը սնուցանէ հիւսուածքները, որուն իբրեւ արդիւնք՝ կը հարթէ մանր կնճիւնները: Հաւանաբար «ֆրանսական» համբուրին տակ թողարկուած է ֆրանսուհիներու երիտասարդութեան ու գեղեցկութեան գաղտնիքը:

### ԱԻԵԼԻ ՇԱՏ ԻՍԿՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՃԱՌՆԵՐ

1) Համբուրը կրնայ փոխարինել ծամոնը, քանի որ կը կարգաւորէ բերանի խոռոչի թթուայնութիւնը: Սովորութիւն դարձուցէք ուտելէն ետք համբուրելը, եւ ձեր ակուններէն հեռու կը մնայ տհաճ կիրը:

2) Դուք նկատած էք, թէ սիրտը ինչ արագ կը բաբախէ համբուրութեան հետք:

Տղամարդոց մօտ վայրկեանը 110, իսկ կանանց մօտ 108 հարուածի կը հասնի: Կ'արագանայ նաեւ շնչառութիւնը: Ասոր իբրեւ հետեւանք՝ կը լաւանայ արեան շրջանառութիւնը, թթուածինի մատակարարումը հիւսուածքներուն, որ բարեբար ազդեցութիւն կ'ունենայ ո'չ միայն սրտանօթային համակարգի, այլեւ՝ թոքերու, ստամոքսի ու միզապարկի աշխատանքին վրայ:


3) Համբուրները կրնան դառնալ կաթուածի, ուղեղի ծերունական հիւանդութիւններու եւ շաքարախառի կանխարգիլում:

Անոնք կը դանդաղեցնեն



ճնշախտի փաստերուն գոյացումը, որոնք կը խախտեն ինսուլինի արտադրութիւնը, կը սաղորեն զարկերակային ճնշման բարձրացումը, կը խանգարեն հիւսուածքներու նորոգութիւնը ու կը վնասեն գլխուղեղի բջիջներուն:

4) Շուրթերը համբուրելը ներգանկային համակարգի հիւսուածքներու հրաշալի կանխարգիլում է, քանի որ շուրթերու ներսի լորձաթաղանթին վրայ ջրային վերջոյթներու խթանումը իր հերթին

NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC

## Garine Depoyan

626-755-4773  
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
ghdepoyan@gmail.com



### ՍՆՆԴԱՌՈՒԹԻՒՆ, ՅՈՒՋՍՈՒՆՔ ԵՒ ՍԻՐՏ

Երբ անյարմար ուտելիքները սրտի հիւանդութիւններու գլխաւոր պատճառը ըլլան, յուզումներն ալ կարեւոր դեր կը խաղան անոնց զարգացումին մէջ: Սրտի կաթուածը կրնայ յառաջ գալ յուզումի մը պատճառած ցնցումէն, զօրաւոր stress-է մը եւ կամ



յուզումնալից ցաւէ մը: Այս կրնայ պատահիլ երբ նոյնիսկ բացակայ է երակներու չորացումը: Ներկայիս մեծ հետաքրքրութիւն մը ստեղծուած է միտքի եւ մարմնի կապակցութեան շուրջ: Լաւ հասկնալու համար յուզումներու դերը եւ անոնց բերած նպաստը սիրտի երակային խնդիրներուն, պէտք է քննել միտքին ու մարմնին միջեւ եղող ընդհանուր կապակցութիւնը: Արդի դարուն, մտային եւ հոգեկան խնդիրներուն կը մօտենան այնպիսի ձեւով մը, որ կարծէք ֆիզիքական խնդիրներէն անջատուած ըլլային: Իսկ աւանդական բժշկութիւնը կը սորվեցնէ, որ մտային եւ յուզական նեղութիւնները, իրենց կարգին, կ'ազդեն ֆիզիքականին կամ անոր վիճակին: Մտային եւ ֆիզիքական խանգարումները տարբեր երեւոյթներ են, սակայն կուզան միեւնոյն արմատէն: Օրինակ, անբնական եւ անկարգ կեանք մը, սովորութիւն դարձած անյարմար ուտելիքներով սնուիլը, ֆիզիքական վարժութիւններու պակասը, եւ անհաւասարակ ընթացքով մտային եւ յուզական գործունէութիւնները 1000 տարի առաջ արդէն իսկ արաբ փիլիսոփայ Իպն-Սինա նօթագրած էր «Սիրտի հիւանդութեան պատճառները յուզումներն են»: Արեւելքի մէջ աւագ օրկաններէն իւրաքանչիւրը կը գուգարէն մտային, յուզական եւ հոգեկան յայտնութիւններու հետ: Այս յայտնութիւնները կը զարգանան հինգ փոփոխական փուլերով, որոնք տեղի կ'ունենան համաձայն yin-yang-ի ներգործութիւններուն, yin-ը տիեզերքի վանողական ուժն է, իսկ yang-ը կեդրոնաձիգ ուժը: Վերադարձալ հինգ զարգացումներն են:

- 1) Առողջ լեարդն ու առողջ մաղձատուրակը կը գուգարցուի համբերութեան եւ տոկունութեան հետ, մինչ հիւանդ լեարդը եւ մաղձատուրակը յառաջ կը բերեն բարկութիւն եւ դիւրաբորբոքութիւն:
- 2) Առողջ սիրտը եւ պզտիկ աղիքը կը գուգարցուին ազնուութեան, հանդարտութեան, գուարթութեան, սրախօսութեան, ներհայեցողութեան եւ հոգեւորութեան:
- 3) Առողջ փայծաղը, բանքրէասը եւ ստամոքսը կը գուգարցուին իմաստութեան, հասկացողութեան եւ համակրութեան հետ, մինչ այս օրկաններուն վատառողջութիւնը կը յառաջացնէ ջղայնոտ վիճակ, մտահոգութիւն եւ վատ քննադատութիւն:
- 4) Առողջ թոքերն կը գուգարցուին ուրախ գագացումին եւ անկեղծութեան հետ: Այս օրկաններուն

վատառողջութեան պարագային, կը յառաջանան տխրութիւնը, մեղամաղձոտութիւնը եւ ընկճուածութիւնը:

5) Երկկամներու եւ միզամանի առողջ վիճակը կը գուգարցուի ինքնավստահութեան, քաջութեան եւ ներշնչումին հետ: Այս օրկաններու վատառողջութիւնը կը յառաջացնէ վախ, յուսահատութիւն եւ ինքնավստահութեան պակաս:

ՈՒՐԱԽ ՍԻՐՏԸ Սիրտը կեդրոնին գտնուող օրկանն է, որ կը միացնէ միտքն ու մարմինը: Ասիկա այն վայրն է, ուր խոհերն ու յուզումներն իրար կը հանդիպին ու կը միաբանին: Սիրտը այնտեղ է, ուր երկինքի եւ երկրի գորութիւնները հոն է որ կը հաւասարակընդունին: Սրտին զարկերը միայն մեր ֆիզիքական վիճակը ցոյց չեն տար, այլեւ արտայայտութիւնն են մեր մտային, յուզական եւ հոգեկան վիճակին: Բոլոր մշակոյթները սիրտը կ'առնեն ուրախ գագացումին հետ: Ուրախ գագացումը անջատ գագացում մը չէ, այլ արդիւնքը այն բոլոր յուզումներուն եւ գագացումներուն, որոնք իրար հետ կը դաշնաւորուին: Երբ ասոնց բոլորը համաձայնին, այն ատեն ուրախութիւն կը զգանք: Երբ օրկանները կը զուգորդուին, այն ատեն մարմինը կը խաղաղի: Մեր օրկաններուն կը յարմար չափով կ'աշխատեն: Մեր օրկաններուն կը կանոնաւոր պատրաստել ճաշերը: Երբ մեր սնունդին մէջ մեծ քանակով միս, հաւկիթ եւ տարբեր կենդանական ուտելիքներ ներմուծենք, մեր միտքը կը սկսի կծկուիլ ու նեղնալ: Այս չափազանց ուտելիքներու պատճառով կը դառնանք յամառ, խիստ, կոռուզական եւ եսասէր: Իսկ եթէ չափազանցենք կաթնեղէնը, շաքարը, անուշեղէնները, խմորեղէնները, պտուղը եւ շաքարոտ օշարակները, մեր ուղեղը կ'ընդլայնի: Կը կորսնցնենք մեր կորովը, մեր վճռակամութիւնը եւ ուղղութիւնը: Դասաւորելու մեր կարողութիւնը կը տկարանայ, արագ չենք կրնար անդադրուիլ, դիւրագրգիռ եւ գերաշիտցի կ'ըլլանք, ժամանակի ընթացքին մեր մտածումները կը դանդաղին, յիշողութիւնը կ'աղօտի, զգայուն եւ մեղամաղձոտ կը դառնանք, մեր շրջապատին եկած գօրաւոր գրգիռներուն դէմ շուտ կը նահանջենք եւ պաշտպանողական կը դառնանք: Ու այսպէս, եթէ չափազանց մսեղէն, հաւկիթ եւ տարբեր կենդանական ուտելիքներ սպառենք, մեր օրկանները, բջիջները եւ հիւսկէնները կը նեղնան եւ կը պզտիկանան: Եթէ չափազանց կաթնեղէն, շաքար, պտուղ, անուշ խմիչքներ սպառենք՝ մեր օրկանները

### ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ՈՐՈՐՆՔ Կ'ԱՒԵԼՑՆԵՆ ՁԵՐ ԿՇԻՈՒ

Եթէ չէք կրնար ազատիլ աւելորդ քիլոկրամներէն, ուշադրութիւն դարձուցէք, թէ արդեօք նշեալ սխալները ամէն օր չէք գործեր: Անմեղ սովորութիւններ, որոնք կը վնասեն ձեր կազմուածքին:

- Դուք կը հետեւիք խիստ սննդակարգի: Խիստ սննդականոնի մեծ մասը ուղղուած է կարճ ժամանակի մէջ ձեզ ազատելու աւելորդ քիլոկրամներէն: Այդ պարագային աւելորդ քիլոկրամները որքան արագ հեռացած են, այնքան արագ ալ կը վերադառնան՝ կրկնակի ձեւով: Հրաժարեցէք խիստ սննդականոններէն: Միայն ճիշդ, հաւասարակընդուն սննդակարգը կրնայ օգնել ձեզ ազատուելու աւելորդ կշիռէն:

- Դուք չափազանց քիչ ջուր կը խմէք: Մեր սննդակարգին մէջ մաքուր ջուրի ոչ-բաւարար քանակի առկայութիւնը թոյլ չի տար, որ նիւթ փոխանակութիւնը լիարժէք կերպով կատարուի: Սա կայն պէտք չէ ջուրը փոխարինել կազ պարունակող ըմպելիքներով:

- Ոչ-կանոնաւոր սնուիլը: Դուք չէք նախաճաշեր, իսկ ճաշի ժամանակ փոքր սենտուիչ մը կ'ուտէք: Ատոր փոխարէն՝ քնանալէ առաջ ունակ էք մեծ չափաբաժիններով ուտելու: Սխալ է:

Այս ամէնը կը վնասէ ձեր կազմուածքին: Աւելի լաւ է սնունդ

ընդունելու գործընթացը բաժնել երեք մասի: Անոնց միջոցներուն երկու անգամ շատ թեթեւ սնունդէք՝ ուտելով խնձոր, ընկուզեղէն կամ քիչ քալորիներով հացի կտորներ:

- Խնդիրներն ու աշխատավայրի մէջ ճնշումները ձեր մարմնին կը ստիպեն ճարպ կուտակել: Եթէ դուք կ'աշխատէք խնդիրները մեղմելու քաղցրով, մի՛ ընտրէք այդ ճանապարհը:

Սորվեցէք ճիշդ հանգստանալ: Մտախոհութիւնը, երկան կամ տաք լոգանքը կրնան ձեր լաւագոյն օգնականները դառնալ:

- Դուք չէք կեդրոնանար կեանքով լի միտք: Դուք կը զգաք, որ ուտելու ժամանակ կշտանալու զգացողութիւն չէք ունենար:

Փորձեցէք մէկ կողմ դնել հեռաձայնը եւ անջատել հեռատեսիլը:

Այլ բանով զբաղած պահուն՝ մարդը չի զգար կերածին համը:

Այդ պատճառով ալ շատ կ'ուտէք, բայց չազեցածութեան զգացողութիւն չէք ունենար:

- Դուք վատ կը քնանաք: Ապացուցուած է, որ անքնութիւնը օրկանիզմին կը պարտադրէ անխաղածիններ կուտակել: Աշխատեցէք քնանալ օրական 8 ժամէն ոչ-պակաս:

Աշխատեցէք ճիշդ սնուիլ եւ ուշադրութիւն յատկացնել լիարժէք հանդիստին:

### ԶՈՐԱՒՈՐ ԱՆՅԱՍԿԱՆՈՒԹԵԱՆ 10 ՆՇԱՆ

1) Դուք չէք բղաւեր եւ ձեզ ջղայնացնելը դիւրին չէ-

Նոյնիսկ ճնշուած պայմաններու մէջ դուք կը նախընտրէք պահպանել հանգստութիւնը եւ կը փորձէք մեղմօրէն վերահսկել իրավիճակը: Դուք կը զգաք, որ ձայնը բարձրացնելով՝ կը նուստացնէք ձեզ:

2) Դուք բաց էք հակադարձ կապի համար- Դուք չէք վախնար սեփական կարծիքը յայտնել: Եւ չէք վախնար լսելու ուրիշներու կարծիքը կամ արձագանգները, կարեւոր չէ՝ անոնք դրական են, թէ՛ բացասական: Դուք ամէն կերպ կ'ողջունէք զանոնք, որովհետեւ այդպէս կրնաք սորվիլ:

3) Դուք ներողութիւն կը խնդրէք, երբ ատիկա անհրաժեշտ է- Դուք գիտէք, թէ երբ սխալած էք եւ ներողութիւն կը խնդրէք՝ շատ չանհանգստանալով իմար տեսք ունենալու մասին: Դուք կը հասկնաք, որ ներողութիւն խնդրելով աւելի նշանակալի կը դառնաք:

4) Դուք կը յարմարիք, որ աւելի լաւ դառնաք- Հոգեբանօրէն գօրաւոր մարդ ըլլալով՝ դուք կը յարմարիք, որ ի վերջոյ փոխուիք: Դուք կը հասկնաք, որ փոփոխութիւնը լաւ բան է, ինչ վիճակի մէջ ալ որ ըլլաք:

5) Դուք հակուած չէք մակերեսայնօրէն մտածելու- Դուք ոչ միայն իրերը կը տեսնէք այնպիսին՝ ինչպիսին կան, դուք զանոնք խորապէս կ'ուսումնասիրէք եւ մանրամասնօրէն ամէն ինչ կը պարզէք եզրակացութիւններ ընելէ առաջ:

6) Դուք շրջապատին ոչինչ կը սպասէք- Եթէ դուք ոեւէ մէկուն համար լաւ բան ըրած էք, ոչինչ



սպասեցէք ի պատասխան: Որովհետեւ դուք միշտ ինքնագոհ մարդ եղած էք:

7) Դուք գիտէք, թէ ինչպէս սահմաններ դնէք- Դուք ուրիշներուն չէք արտօներ խախտելու ձեր ստեղծած սահմանները եւ քաղաքավար, բայց հաստատակամ եղանակով զգացնել կու տաք զանոնք:

8) Դուք բաց էք օգնութեան համար- Դուք լաւ տեղեկացուած էք այն ոլորտներուն մասին, որոնց մէջ դուք տկար էք եւ չէք վախնար օգնութեան համար դիմելու շրջապատին: Դուք կը հասկնաք, որ այդպէս վարուելով պարզապէս կը սորվիք:

9) Դուք անկախ էք- Դուք անոնցմէ չէք, որոնք յուզականօրէն կը կապուին ուրիշներուն իրենց նպատակին հասնելու համար: Այդպէս վարուելով դուք կը պահպանէք առողջ անձնական եւ մասնագիտական յարաբերութիւններ:

10) Դուք կը հետեւիք ձեր բնագոյններուն- Դուք կը հաւատաք փորձ ձեռք բերելուն, այդ պատճառով կը սորվիք դատողութիւններ ընելու ժամանակ ականջ դնել ձեր բնագոյններուն:



ՄԱՐԶԱԿԱՆ

Ռոմելու Լուկակուն Կրկնեց Դիեգո Մարատոնայի Նուաճումը

Պեղծի գալի հաւաքականի եւ անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» յարձակուող Ռոմելու Լուկակունը թունիսի թիմի դէմ աշխարհի առաջնութեան խմբային փուլի երկրորդ տուրի խաղում (5-2) խփած երկու գոլերի շնորհիւ կրկնեց արժենտինական ֆուտպոլի լեգենդ Դիեգո Մարատոնայի նուաճումը: Լուկակունը աշխարհի առաջնութեան առաջին երկու հանդիպումներում դարձաւ երկուական կողի հեղինակ: Մարատոնան այդպիսի արդիւնաւետութիւն էր ցուցադրել 1986թ. աշխարհի առաջնութիւնում:



Լուկակունը երկու գոլ էր խփել նաեւ Պանամայի հաւաքականի դէմ խաղում, բելգիացիները յաղթել էին 3-0 հաշուով:

Լուիս Սուարեսը՝ Ռուսաստանի Յետ Հանդիպման Մասին. Սա Այն էր, Ինչը Ցանկանում էինք

Ուրուգուայի հաւաքականի յարձակուող Լուիս Սուարեսը խօսել է ԱԱ-2018-ի Ռուսաստանի հետ հանդիպման մասին, որում հարաւամերիկացիները յաղթեցին 3-0 հաշուով:



«Սա այն էր, ինչը մենք ցանկանում էինք: Պատմութեան նոր էջ գրեցինք՝ զբաղեցնելով առաջ տեղը:

Առաջնութեան առաջին 2 խաղերում աւելի զգուշաւոր էինք գործում, քանի որ չէինք ցանկանում սխալուել: Այս հանդիպումը տարբերուեց էր մնացածներից. գործում էինք աւելի ազատ եւ դա յստակ տեսանք էր», - խաղից յետոյ ասել է կատալոնական «Բարսելոնայի» յարձակուողը:

9 միւտրով Ուրուգուայը խմբում գրաւեց առաջին տեղը եւ պայքարը կը շարունակի 1/8 եզրափակիչ փուլում:

Էդեն Ազարը Լաւ Թիմ Ունենք, Կը Ցանկանայինք Հասնել Եզրափակիչ

Լաւ թիմ ունենք, կը ցանկանայինք հասնել եզրափակիչ, ասել է Պեղծիայի հաւաքականի աւագ էդեն Ազարը աշխարհի առաջնութեան խմբային փուլի երկրորդ տուրում թունիսի հաւաքականին 5-2 հաշուով յաղթելուց եւ 1/8 եզրափակիչի ուղեգիր նուաճելուց յետոյ:



«Արագ կողից յետոյ հեշտ էր խոշոր հաշուով յաղթել թունիսին: Օգտագործեցինք ազատ տարածութիւնները, արագ հակադրահարներ: Հեշտ էր խաղալը:

Չորս տարի առաջ մենք պարտուեցինք Արժենթինային, բայց եթէ հիմա խաղայինք արժենթինացիների հետ, այլ պատկեր կը լինէր: Հիմա մենք աւելի ուժեղ ենք, քան չորս տարի առաջ:

Լուկակունը ամէն ինչի արժանի ֆուտպոլիստ է: Նա հօր մարզում է, շատ կոլեր է խփում: Նա լաւ մարզավիճակում է», - Ազարի խօսքը մէջբերում է championat.com-ը:

Ազարը ճանաչուեց էր Բելգիա - Թունիս հանդիպման լաւագոյն խաղացող: Նա դարձել էր դուբլի հեղինակ:

Տիբո Կուրտուա. «Չէի Ցանկանայ Վերադառնալ Անգլիա, Եթէ Պարտուեցնք Անգլիացիներին»

Բելգիայի հաւաքականի եւ Լոնտոնի «Չելսիի» դարպասապահ Տիբո Կուրտուան յայտարարել է, որ չէր ցանկանայ վերադառնալ Անգլիայի, եթէ աշխարհի առաջնութեան խմբային փուլի վերջին խաղում պարտուեն Անգլիայի հաւաքականին: Երկու տուրերից յետոյ Բելգիան ու Անգլիան վաստակել են 6-ական միւտր, ապահովել են 1/8 եզրափակիչի ուղեգրերը եւ կը վիճարկեն խմբում առաջին տեղը:

«Յաղթական տրամադրուածութիւնը չկորցնելու համար պէտք է շարունակել յաղթել: Անձամբ, ես ցանկանում եմ յաղթել: Կարծում եմ՝

Հայաստանի Հաւաքականը Երկրորդն է Պէյրուսի Մրցաշարում



Պասքետպոլի Հայաստանի ազգային հաւաքականը երկրորդ տեղն է գրաւել Լիբանանի մայրաքաղաք Պէյրութում անցկացուած մրցաշարում: Հայաստանի թիմը 63-72 հաշուով պարտուեց է Քաթարի թիմին, 90-85 հաշուով առաւելութեան է հասել Լիբանանի հաւաքականի նկատմամբ, որը նուաճել է յաղթողի կոչումը, Քաթարը գրաւել է երրորդ տեղը:

Հայաստանի հաւաքականի պասկետպոլիստները պարգեւատրուել են մետալներով: Տող Օ'Բրանեանը ճանաչուեց է մրցաշարի լաւագոյն կեդրոնական, Ալան Հեսը՝ լաւագոյն թեթեւ յարձակուող իսկ, Արազդ Աբրամեանը՝ լաւագոյն խաղացող:

Անգլիայի Ֆուտպոլի Ֆեդերացիայի Նախագահն Այցելեց Հայաստան

Յունիսի 21-ին երկօրեայ աշխատանքային այցով Հայաստան ժամանեց Անգլիայի Ֆուտպոլի Ֆեդերացիայի նախագահ Գրեգ Քլարքը, որին ուղեկցում էր Միջազգային յարաբերութիւնների բաժնի ղեկավար Ջեյն Բեյթմենը, յայտնում է Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի պաշտօնական կայքը:



ՀՖՖ ղեկավարութեան հետ հանդիպման ընթացքում քննարկուեցին հնարաւոր համագործակցութեան ոլորտներն ու ուղղութիւնները եւ ձեռք բերուեցին կոնկրետ պայմանաւորութիւններ, համաձայն որի երկու ֆեդերացիաների իրաւաբանական ծառայութիւնները նախագահների ստորագրութեանը կը ներկայացնեն գլոբալ գործընկերութեան եւ համագործակցութեան պայմանագրի նախագիծը: Իսկ մինչ այդ՝ ՀՖՖ տեխնիկական տնօրէն անգլիական ֆուտպոլի մարզչական լաւագոյն փորձի ուսումնասիրութեան նպատակով կը հիւրընկալուի իր գործընկերոջ կողմից եւ նրանք իրենց հերթին եւս կը քննարկեն տեխնիկական եւ մարզչական կրթական ոլորտում համագործակցութեան հնարաւորութիւնները:

Հիւրերն այցելեցին նաեւ ՀՖՖ Տեխնիկական կեդրոն՝ Ֆուտպոլի ակադեմիա եւ շատ բարձր գնահատեցին ինչպէս ենթակառուցուածքներն, այնպէս էլ տարուող աշխատանքները:

Տիբո Ազարը Վերադառնալ Ինձ

Պրագիլիայի հաւաքականի պաշտպան Տիբո Ազարը պատմել է Նեյմարի հետ կոնֆլիկտի մասին, որը տեղի ունեցաւ Կոստա Ռիկայի հետ հանդիպման ժամանակ: Յիշեցնենք, որ Պրագիլիան ԱԱ-2018-ի խմբային փուլի երկրորդ տուրում յաղթեց 2-0 հաշուով:

«Ինձ հիասթափեցրեց Նեյմարի պահուածքը, երբ ես գնդակը վերադարձրեցի մրցակցին (արդար խաղի կանոնների համաձայն): Նա ինձ վերաւորեց:

Չեմ գտնում, որ սխալ եմ վարուել: Մենք ցանկանում էինք ժամանակ ձգել: Ես վերադարձրեցի գնդակը. «միեւնոյնն է մենք ժամանակ չէինք շահելու», - Միլիվայի խօսքն է փոխանցում L'Equipe-ը:

Վերոն. «Մեսին Ամաչկոտ Տղայ է, Նա Չպէտք է Առաջատար Լինի»

Արժենթինայի հաւաքականի նախկին կիսապաշտպան Խուան Սեբաստիան Վերոնը խօսել է Լիոնել Մեսիի եւ Դիեգո Մարադոնայի համեմատութեան մասին:


«Վստահօրէն կարող եմ ասել, որ Մեսին Մարատոնա չէ: Ինձ յաջողուեց է խաղալ երկուսի հետ: Մարատոնան թիմի շարժիչն էր, նա հտալոն էր, որի վրայ կարող էիր յոյս դնել:

Մեսին ամաչկոտ տղայ է, նա չպէտք է առաջատար լինի: Ես չեմ խօսում նրա ֆիզիքական հնարաւորութիւնների մասին», - Վերոնի խօսքն է փոխանցում La Gazzetta dello Sport-ը:

Բելգիայի հաւաքականում այդպէս են մտածում բոլորը», - Կուրտուայի խօսքը մէջբերում է The Telegraph-ը:



### Հրապարակուած է Հայագի Լուսանկարիչ Ֆէպուս Էֆէնտիի Յուշերը



Թուրք գրագէտ Իւմիտ Եիւք-սէլ, «Թիւրքիյէ» թերթին մէջ հրապարակած է Օսմանեան Պալատի հայ լուսանկարիչ Ֆէպուս Էֆէնտիի (Պօղոս Թարքուլեան) յուշերը: Օսմանեան շրջանի արքունի լուսանկարիչ Ֆէպուս 23 տարի շարունակ պալատին լուսանկարիչը եղած է:

Իւմիտ Եիւքսէլ, իր ուսումնասիրութիւններու հիման վրայ լոյս աշխարհ բերած է Ֆէպուսի յուշերը, պատմելով թէ Օսմանեան թագաւորներ ինչ վերաբերմունք ցոյց կու տային լուսանկարիչներուն, երբ լուսանկարուիլ ուզէին:

Ֆէպուս Էֆէնտի պատմած է իր ապրումները, Սուլթան Պահատէտի սուր կրեւոր հանդիսութիւնը լուսանկարելու ընթացքին:

Ֆէպուս, Սուլթանին ըսած է. «Եթէ արտօնէք հիմա պիտի լուսանկարեմ»: Սուլթանը յանկարծ գլուխը դարձուցած է եւ ըսած. «Կեցէ՛ք, քովէն քաշուած լուսանկար թող ըլլայ»:

Արքունի լուսանկարիչ Ֆէպուս Սուլթան Ապտիւլմէճիտի մասին ալ այս յիշատակը պատմած է. «Ապտիւլմէճիտ շատ բժախնդիր էր: Լուսանկարի գործիքին դիմաց երկար ու երկար ձեւ կը փոխէր: «Այսպէ՛ս կենամ, թէ՛ ա՛յնպէս», - կ'ըսէր:

Իւմիտ Եիւքսէլ կը գրէ, որ լուսանկարիչ Ֆէպուս Պալատի կիները երբեք չէ լուսանկարած: Ան պալատ հրաւիրուած է միայն էնվէր փաշայի հարսանեկան արարողութիւնը լուսանկարելու:

### Պարզուեց Որ ՀՀԿ-ն

Շարունակուած էջ 6-էն

տոյ որքանով է նպաստաւոր վիճակը ՀՀ-ԵՄ յարաբերութիւնները գարգացման համար:

-Կարծում եմ՝ աւելի նպաստաւոր պայմաններ են, քան Սերժ Սարգսեանի ժամանակ:

-Որքանով է համոզիչ ներկայ իշխանութիւնների որդեգրած քա-

ղաքականութիւնը ՌԴ-ի հետ յարաբերութիւններում:

-Իշխանութիւնները Հայաստանի անվտանգութիւնը տեսնում են ՌԴ-ի հետ յարաբերութիւններում Սերժ Սարգսեանի քաղաքականութիւնը ժառանգելու մէջ՝ միգրացիոն յստակեցնելով, աւելի հայնպաստ դարձնելով:

### Ընկերուի Լեճա Մանուկեան

Շարունակուած էջ 6-էն

կանգնինք մեր հայրենիքին եւ կատարուող բարեկարգութիւններուն, որոնց բուն նպատակն է գերծմնալ չարիքէն, սուտէն եւ ապօրինութենէն. բարեկարգութիւններ որոնք անպայման կը հետապնդեն մեր իսկական անկախութիւնը եւ հզօրացումը:

Թաւշեայ նոր արշալոյսներու ծագումէն ետք, այսօր հայր մեծապէս կը կառչի լիարժէք եւ մշտական անկախութիւն ապահովելու:

Անկախութիւնը պէտք է ըլլայ արտացոլացումը մեր նպատակներուն: Հայ ժողովուրդը պէտք է ըլլայ ինքնաբաւ, հանգիստ եւ ուրախ, որպէսի չլքէ իր տունը. որպէսզի կանգուն մնայ մեր հայրենիքը...

Անկախութիւնը պէտք է արժեւորել եւ հոգ տանիլ՝ յարատեւութեամբ: Որքան ճիշդ ապրինք անկախութիւնը, այդքան աւելի կը մօտենանք մեր պահանջներու իրականացման եւ իրաւունքներու ձեռքբերման:

Մեր մաղթանքն է որ ներկայ

դրութիւնը կայուն եւ հետեւողական մնայ եւ անկէ ետք լիարժէք կերպով ժողովրդավարութիւնը հաստատուի Մայր հայրենիքէն ներս, կայուն պահելով նաեւ քաղաքական, ընկերային եւ տնտեսական իրավիճակը եւ տարածաշրջանային խաղաղութիւնը:

Թող ամէն մէկ հայ գիտակցի իր պարտականութիւններուն եւ իր ներդրումը բերէ այս հսկայ գործին, որպէս Ազգային պարտականութեան կարեւոր ուղեգիր, աշխատելով այսօրուայ հրամայականներով, տէր կանգնելով իր ինքնութեան եւ դառնալով հայ ազգի արժանաւոր զաւակ եւ այն ատեն մենք անպայման կը հասնինք այդ լուսաւոր եւ պայծառ հորիզոնին, իսկական անկախութեան եւ այդ ճանապարհով ալ օր մը անպայման կ'ունենանք ամբողջական մեր Հայաստանը:

Կեցցեն անոնք որ ամէն բանէ վեր կը դասեն հայրենիքի բարօրութիւնը:

Կեցցէ՛ Հայ Ազգը,  
Կեցցէ՛ Ազատ ու Անկախ Նոր Հայաստանը

### ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Թինա Գրիգորեաններու երկրորդ աղջիկ զաւակով բախտաւորուելուն առթիւ Հ.Մ.Մ.ի վարչութիւնը իր շնորհաւորութիւնները կը յայտնէ ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արուսեակ Գրիգորեաններուն Այս առթիւ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

### Կարելոր Հարուած Թուրքիայի

Շարունակուած էջ 13-էն

մտածելակերպը, որը ես, թէեւ դժուարութեամբ, բայց կարողացայ փոխել իմ ուսումնասիրութիւնների արդիւնքում: Այդ ժամանակուանից ի վեր ես շարունակում եմ գրել, որ Թուրքիան պէտք է առերեսուի իր պատմութեանը եւ ընդունի անցեալի սխալները», - ասում է պատմաբանը.

Թաներ Աքչամը, սակայն, չի տեսնում որեւէ հեռանկար, որ Թուրքիան մօտ ապագայում կարող է ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը:

«Թուրքիան նորից իր ձմեռն է ապրում: 2002-2012 թթ.-ին գարթօնք եղաւ, սակայն այժմ վերադարձել է իր աւանդական քաղաքականութեանը, քանի որ իշխող կուսակցութիւնն ու նախագահ էրդողանը սկսեցին դաշնակցել Թուրքիայի աւանդական ուժերի՝ բիւրոկրատիայի եւ զինուորականութեան հետ, որոնք էլ հենց հանդիսանում են ժխտողական քաղաքականութեան առանցքը», - ասում է Աքչամը:

Պատմաբանը որեւէ փոփոխութիւն չի ակնկալում Թուրքիայի դիրքորոշման մէջ նոյնիսկ Յունիսի 24-ին սպասուող ընտրութիւններից յետոյ, քանի որ միայն 10 տոկոս ժողովրդականութիւն վայելող քրտամէտ կուսակցութիւնն է ճանաչում Հայոց ցեղասպանութիւնը, իսկ մնացած 90 տոկոսը շարունակում են ժխտել փաստը: Հետեւաբար, ոչինչ չի փոխուի, նոյնիսկ, եթէ ընդդիմութիւնը իշխանութեան գայ:

Ինչ վերաբերում է այլ երկրների կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչման կարեւորու-

թեան, Թաներ Աքչամն ասում է, որ միայն ԱՄՆ-ի կողմից ճանաչումը կարող է փոփոխութիւն բերել:

«Միւս բոլոր երկրները կարող են որոշ բարոյական ազդեցութիւն ունենալ: Իսկ ինչու է ԱՄՆ տարբերում: Որովհետեւ եթէ այն 1915 թ-ի դէպքերը որակի որպէս մարդկութեան դէմ յանցագործութիւն կամ ցեղասպանութիւն, հայերը, կամ այլ շահագրգիռ կողմերը, կարող են այդ երկրում հայց ներկայացնել Թուրքիայի դէմ, ինչն էլ իր հերթին կարող է յանգեցնել թուրքական ակտիւների զգալի կորուստի ԱՄՆ-ում, կամ Թուրքիայի դէմ էմբարգոյի: Սա է պատճառը, որ ԱՄՆ-ը չի ճանաչում Հայոց ցեղասպանութիւնը», - ասում է Թաներ Աքչամը:

Պատմաբանն իր աշխատութիւններով ջախջախում է Թուրքիայի ժխտողականութեան բոլոր փաստարկները, բայց համոզուած է, որ Թուրքիան ժխտելու այլ ուղիներ կը գտնի:

«Իմ վերջին հրատարակութիւնը կարեւոր հարուած էր Թուրքիայի ժխտողականութեանը: Նրանք, հնարաւոր է, չպնդեն իրենց աւանդական փաստարկները, բայց կասկած չունեն, որ կը գտնեն նոր ուղիներ: Ժխտողականութեանը կարելի է յաղթել քաղաքականութեամբ, ոչ թէ ակադեմիական հետազօտութիւններով»:

Թաներ Աքչամն այժմ ուսումնասիրում է Երուսաղէմի արխիւները, աշխատում է 1920-1921 թթ. Հայկաի հայ որբերի, ինչպէս նաեւ Քեմալ Փաշայի՝ Աթաթուրքի մասին գրքերի վրայ: Առայժմ չի կարող ասել, թէ որ աշխատութիւնն աւելի շուտ պատրաստ կը լինի:

## VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ  
Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
Հեռաձայնէ՛ ՎԱՀԷ ԱՉԱՊԱՀԵԱՆԻՆ




**Vahe Atchabahian**

1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

Ձեր Ծանուցումները Վստահեցէք  
«Մասիս» Շաբաթերօրին



ՄՈՅԻԱԿ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ



**ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ**



**103-րդ ԱՄԵՆԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ**

**«Մեր Յատակ Տեսլականը՝ Ժողովրդավարական և Անկախ ՀԱՅԱՍՏԱՆ»**

Կազմակերպությամբ՝

**Ս.Դ.Հ.Կ. Փասատինայի Փարամազ Մասնաճիւղի**

Հովանավորությամբ՝

**Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի**

Գլխավոր Բանախօս՝

**Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչության Անդամ Գանատայէն**

**Ընկ. Կիրակոս Թիրթիւնճեան**

**Կիրակի Յուլիս 15 2018, Երեկոյան ժամը 5:00-ին**

**Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ**

**Կիրակոս Սրահ**

**2215 E. COLORADO BLVD., PASADENA, CA. 91107**

Գեղարուեստական Պատշաճ Յայտագիր

Մուտքը Ազատ